



Գիրքը հրատարակվել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի հովանավորությամբ:

ՀՀ դատավորների միությունը շնորհակալություն է հայտնում ՀՀ իրավաբանների միությանը, ՀՀ փաստաբանների պալատին, Հայ երիտասարդ իրավագետների միությանը, Ջարգացման հայկական ինստիտուտին՝ իրենց առաջարկություններով ու դիտողություններով ընտանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի ստեղծմանն աջակցելու համար:

Ընտանեկան հանրամատչելի գրադարանի շարքին կարող եք ծանոթանալ՝ այցելելով ՀՀ դատավորների միության կայքէջ հետևյալ հասցեներով՝

www.datavor.am

www.judge.am

**ASSOCIATION OF JUDGES OF THE
REPUBLIC OF ARMENIA**

VAHE YENGIBARYAN

**COURT
AND
JUSTICE**

FAMILY LAW MANUAL

Edited by: **Hrachik SARGSYAN**
*President of the Association of Judges of the RA,
Chairman of Common Jurisdiction Court of Armavir marz*

Lingvo-stylistic editor: **Amalya HARUTYUNYAN**

YEREVAN
«ANTARES»
2009

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ**

ՎԱՅԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

**ԴԱՏԱՐԱՆ
ԵՎ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ**

Խմբագիր՝ **Հրաչիկ ՍԱՐԳՍՅԱՆ**
*ՀՀ դատավորների միության նախագահ,
Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության
դատարանի նախագահ*

Լեզվաոճական
Խմբագիր՝ **Ամալյա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ
«ԱՆՏԱՐԵՍ»
2009

ՀՏԴ 347 (479.25)
ԳՄԴ 67.99(2) 92
Ե 171

**Տպագրվում է
ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ**

Ենգիբարյան Վահե
Ե 171 Դատարան և արդարադատություն.- Եր.: Անտարես, 2009.- 92 էջ:

Ձեռնարկում հարցերի ու պատասխանների միջոցով հանրամատ-
չելի ներկայացված են արդարադատության բնագավառին վերա-
բերող քաղաքացիներին առավել հուզող հարցերի պարզաբա-
նումներ:

ISBN 978-9939-51-133-7

ԳՄԴ 67.99(2) 92

© ՀՀ դատավորների միություն, 2009թ.
© Ենգիբարյան Վահե, 2009թ.
© Անտարես, 2009թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	13
---------------	----

ԲԱԺԻՆ 1

Հայաստանի Հանրապետության դատական համակարգը

Հայաստանի Հանրապետությունում ինչպիսի՞ դատական համակարգ է գործում	15
Ո՞րն է Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը	15
Ո՞ր դատարանն է իրականացնում սահմանադրական արդարադատություն և ինչպիսի՞ իրավասություններ ունի այն	15
Ովքե՞ր կարող են դիմել ՀՀ սահմանադրական դատարան	16
Որո՞նք են ՀՀ առաջին ատյանի դատարանները	16
Հայաստանի Հանրապետությունում կա՞ մասնագիտացված դատարան	16
Որո՞նք են վերաքննիչ դատարանները	17

ԳԼՈՒԽ 1

Ընդհանուր իրավասության դատարաններ

Ինչպիսի՞ իրավասություններ ունի ընդհանուր իրավասության դատարանը	17
Ե՞րբ են ուժի մեջ մտնում ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը	17
Ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերի ուժի մեջ մտնելու ինչպիսի՞ այլ ժամկետներ են սահմանված	17
Որտե՞ղ են տեղակայված ընդհանուր իրավասության դատարանները	18
Դատարաններում գործերը քննվում են մե՞կ դատավորի կողմից, թե՞ կոլեգիալ կազմով	21

ԳԼՈՒԽ 2

Վարչական դատարան

Ինչպիսի՞ իրավասություն ունի վարչական դատարանը	21
Որտե՞ղ է տեղակայված վարչական դատարանը	21
Ե՞րբ են ուժի մեջ մտնում վարչական դատարանի դատական ակտերը	22

ԳԼՈՒԽ 3

Վերաքննիչ դատարաններ

Ի՞նչ վերաքննիչ դատարաններ են գործում Հայաստանի Հանրապետությունում և ի՞նչ իրավասություններ ունեն	22
Ե՞րբ են օրինական ուժի մեջ մտնում վերաքննիչ դատարանի դատական ակտերը	23
Վերաքննիչ բողոք բերելու ի՞նչ ժամկետներ են սահմանված	23

Ովքե՞ր իրավունք ունեն բերելու վերաքննիչ բողոք	24
Ի՞նչը կարող է հանդիսանալ վերաքննիչ բողոք բերելու հիմք	24
Քրեական գործով վերաքննիչ բողոքն ինչպիսի՞ բովանդակություն պետք է ունենա	24
Քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքն ինչպիսի՞ բովանդակություն պետք է ունենա	24
Ո՞ր դեպքերում քաղաքացիական գործերով չի կարող վերաքննիչ բողոք բերվել	25
Փաստի հարցում քաղաքացիական գործերով վերաքննության ինչպիսի՞ սահմաններ կան	25
Ի՞նչ լիազորություններ ունի վերաքննիչ դատարանը	26

ԳԼՈՒԽ 4

Վճռաբեկ դատարան

Ո՞րն է վճռաբեկ դատարանի գործունեության նպատակը և ի՞նչ իրավասություն ունի	27
Վճռաբեկ դատարանի դատական ակտերը ե՞րբ են մտնում օրինական ուժի մեջ	28
Ի՞նչ կառուցվածք ունի վճռաբեկ դատարանը և որտե՞ղ է այն գտնվում	28
Վճռաբեկ բողոք բերելու ի՞նչ ժամկետներ են սահմանված	28
Ովքե՞ր վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն	29
Ի՞նչը կարող է հանդիսանալ վճռաբեկ բողոք բերելու հիմք	29
Քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքն ինչպիսի՞ բովանդակություն պետք է ունենա	29
Քրեական գործով վճռաբեկ բողոքն ինչպիսի՞ բովանդակությոն պետք է ունենա	30
Ո՞ր դեպքերում չի կարող վճռաբեկ բողոք բերվել	30
Ի՞նչ լիազորություններ ունի վճռաբեկ դատարանը	31

ԲԱԺԻՆ 2

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ի՞նչ իրավասություն ունի	32
Ի՞նչ կառուցվածք ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և որտե՞ղ է այն գտնվում	32
Ովքե՞ր կարող են դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան	32
Ի՞նչը կարող է հանդիսանալ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու հիմք և ի՞նչ ժամկետներ են սահմանված	33
Ո՞ր դեպքերում դիմումը չի կարող քննվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում	33
Ի՞նչ իրավական ուժ ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռը և ինչպիսի իրավական հետևանքներ կարող է առաջացնել	33

ԲԱԺԻՆ 3

Ներկայացուցչություն

ԳԼՈՒԽ 1

Ներկայացուցչությունը դատարանում

Քաղաքացիները դատարանում կարող են գործերը վարել ներկայացուցիչների միջոցով	35
Ովքե՞ր կարող են ներկայացուցիչներ լինել դատարանում	35
Ե՞րբ է լիազորագիրը համարվում պատշաճ ձևակերպված	35
Ինչպիսի՞ լիազորություններ կարող է ունենալ ներկայացուցիչը	35
Ովքե՞ր են օրինական ներկայացուցիչները	36

ԳԼՈՒԽ 2

Ներկայացուցչություն և լիազորագիր

Ի՞նչ է ներկայացուցչությունը	36
Ի՞նչ է լիազորագիրը	37
Մինչև ե՞րբ է ուժի մեջ լիազորագիրը	38
Կարելի՞ է, արդյոք, գործողությունների կատարումը վերալիազորել այլ անձի	38
Ե՞րբ է դադարում լիազորագրի գործողության ժամկետը	38

ԳԼՈՒԽ 3

Դատական ծախսեր

Ի՞նչ է իրենից ներկայացնում դատական ծախսը	39
Ինչպե՞ս է որոշվում հայցագինը	39
Ի՞նչ է պետական տուրքը	40
Ե՞րբ է վճարվում պետական տուրք	40
Ի՞նչ իրավունքներ ունեն պետական տուրք վճարողները	40
Ի՞նչ պարտականություններ ունեն պետական տուրք վճարողները	41
«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով որո՞նք են պետական տուրքի գանձման օբյեկտները	41
Որքա՞ն պետական տուրք պետք է վճարել դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար	42
Հայաստանի Հանրապետությունում որքա՞ն է սահմանված բազային տուրքը	43
Կարո՞ղ է, արդյոք, քաղաքացին ազատվել պետական տուրքի վճարումից, եթե այո, ապա ո՞ր դեպքերում	43
Կարո՞ղ է, արդյոք, վերադարձվել վճարված պետական տուրքը	45
Պետական տուրքի վերադարձման ի՞նչ կարգ գոյություն ունի	46
Ինչպե՞ս են բաշխվում դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև	46

ԲԱԺԻՆ 4 **Ընդդատություն**

ԳԼՈՒԽ 1

Քաղաքացիական գործերի ընդդատությունը

Ո՞ր գործերն են ընդդատյա ընդհանուր իրավասության դատարանին	47
Դատարան դիմել ցանկացող անձը (հայցվորը) հայցադիմումը ո՞ր դատարան պետք է ներկայացնի	47
Իրավունք ունի՞ դատարան դիմել ցանկացող անձը (հայցվորը) իր հայեցողությամբ ընտրել իր գործը քննող դատարանը	47
Հնարավոր՞ էն դեպքեր, երբ քաղաքացիական գործը քննվի ոչ թե կողմերից որևէ մեկի բնակության վայրի, այլ վիճելի գույքի գտնվելու վայրի դատարանում	48
Կարո՞ղ է, արդյոք, մի դատարան քննել մեկ այլ դատարանի կողմից քննության ենթակա քաղաքացիական գործ, թե ոչ, ո՞ր դեպքերում է դատարանը գործը հանձնում մեկ ուրիշ դատարան	48

ԳԼՈՒԽ 2

Քրեական գործերի ընդդատությունը

Ո՞ր քրեական գործերն են ընդդատյա առաջին ատյանի դատարաններին	49
Ո՞ր գործերն են ընդդատյա քրեական վերաքննիչ դատարանին	49
Ո՞ր գործերն են ընդդատյա ՀՀ վճռաբեկ դատարանին	49
Տարբեր տարածքներում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերը ո՞ր տարածքի դատարանին են ընդդատյա	49
Այն քրեական գործերը միացնելիս, որոնք ընդդատյա են տարբեր դատարաններին, ո՞ր դատարանը պետք է քննի	49
Ինչպե՞ս պետք է վարվի դատարանը, երբ պարզի, որ իր վարույթն ընդունած գործն ընդդատյա է մեկ այլ դատարանի քննությանը	50
Կարո՞ղ է, արդյոք, փոխվել քրեական գործի տարածքային ընդդատությունը	50
Ինչպե՞ս են լուծվում ընդդատության մասին առաջացած վեճերը	50

ԲԱԺԻՆ 5 **Գործին մասնակցող անձինք**

ԳԼՈՒԽ 1

Քաղաքացիական դատավարության կողմերը

Ովքե՞ր են քաղաքացիական դատավարության կողմերը և գործին մասնակցող անձինք	51
Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունեն գործին մասնակցող անձինք	51

Հնարավոր են, արդյոք, դեպքեր, երբ գործին մասնակցեն մի քանի հայցվորներ կամ պատասխանողներ կամ գործի քննության ընթացքում կողմերի կազմում կատարվի փոփոխություն	52
Հայցվորը կարող է, արդյոք, փոխել հայցի հիմքը կամ առարկան, հայցային պահանջների չափը, կամ հրաժարվել հայցից	52
Պատարանում կողմերը կարող են, արդյոք, կնքել հաշտության համաձայնություն	52
Ի՞նչ է լինում, երբ կողմերից մեկը դուրս է գալիս դատավարությունից	53

ԳԼՈՒԽ 2

Հայցի հարուցում

Ինչպե՞ս պետք է ներկայացվի հայցադիմումը և ինչ բովանդակություն պետք է այն ունենա	53
Ի՞նչ փաստաթղթեր է հարկավոր կցել հայցադիմումին	53
Հայցվորն իրավունք ունի՞, արդյոք, մեկ հայցադիմումում միացնել մի քանի հայցապահանջներ	54
Պատարանն իրավունք ունի՞, արդյոք, մերժելու հայցադիմումը, եթե այո, ապա որ դեպքերում	54
Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է, արդյոք, բողոքարկվել	54
Ո՞ր դեպքերում է դատարանը վերադարձնում հայցադիմումը	55
Մինչև դատաքննությունն սկսելը պատասխանողը կարող է, արդյոք, ծանոթանալ հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին	55
Ինչպե՞ս է վարվում դատարանը, երբ հայտնի չէ պատասխանողի գտնվելու վայրը՝ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկելու համար	56
Ստանալով հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենները՝ պատասխանողը կարող է, արդյոք, դրանց վերաբերյալ ներկայացնել առարկություններ	56
Քաղաքացին իրավունք ունի արդյոք հակադարձ (հակընդդեմ) պահանջ ներկայացնել դատավարության ժամանակ, եթե այո, ապա ո՞ր դեպքերում	57

ԳԼՈՒԽ 3

Հայցի ապահովում

Հայցի ապահովման ինչպիսի՞ միջոցներ կան	57
Ե՞րբ և ինչպե՞ս է վերացվում հայցի ապահովումը	58

ԲԱԺԻՆ 6

Բացարկը և ինքնաբացարկը քաղաքացիական և քրեական դատավարություններում

Ի՞նչը կարող է հիմք հանդիսանալ դատավորի համար՝ ինքնաբացարկ հայտնելու	59
---	----

ԳԼՈՒԽ 1

Ինքնաբացարկը քաղաքացիական դատավարությունում

Ինչպե՞ս է դատավորն ինքնաբացարկ հայտնում 60
 Ինքնաբացարկի միջնորդությունն ի՞նչ կարգով է լուծվում 60
 Ինչպիսի՞ հետևանքներ են առաջանում ինքնաբացարկից հետո 60

ԳԼՈՒԽ 2

Բացարկը և ինքնաբացարկը քրեական դատավարությունում

Ի՞նչ է հասկացվում «բացարկ, ինքնաբացարկ, գործով վարույթից հեռացնելու միջնորդություն» ասելով 61
 Դատավորը ե՞րբ է պարտավոր ինքնաբացարկ հայտնել 62
 Ինչպե՞ս է լուծվում դատավորին ինքնաբացարկ հայտնելու միջնորդության հարցը 62
 Դատախազը ո՞ր դեպքերում չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին 63
 Ինչպե՞ս է լուծվում դատախազին հայտնված բացարկը 63
 Կարելի՞ է, արդյոք, բացարկել դատական միստի քարտուղարին 63
 Ո՞ր դեպքերում պաշտպանը կամ ներկայացուցիչը կարող են հեռացվել քրեական գործով վարույթից 64

ԲԱԺԻՆ 7

Դատավարական ժամկետները քաղաքացիական և քրեական դատավարություններում

ԳԼՈՒԽ 1

Դատավարական ժամկետները քաղաքացիական դատավարությունում

Ինչպե՞ս են հաշվարկվում դատավարական ժամկետները 65
 Ե՞րբ են ավարտվում դատավարական ժամկետները 65
 Կարո՞ղ են, արդյոք, կասեցվել դատավարական ժամկետները 65
 Կարելի՞ է, արդյոք, վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետները 65

ԳԼՈՒԽ 2

Դատավարական ժամկետները քրեական դատավարությունում

Ինչպե՞ս են հաշվարկվում դատավարական ժամկետները քրեական դատավարությունում 66
 Կարելի՞ է, արդյոք, վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետները 66

ԳԼՈՒԽ 3

Չայցային վաղեմություն

Դատարան դիմելու համար որոշակի ժամանակային սահմանափակումներ կա՞ն, թե՞ ոչ 67

Կարող են արդյոք հայցային վաղեմության ժամկետները կողմերի համաձայնությամբ փոփոխվել, կասեցվել և ընդհատվել	67
Ինչպե՞ս են հաշվարկվում հայցային վաղեմության ժամկետները	68
Ե՞րբ կարող է կասեցվել կամ ընդհատվել հայցային վաղեմության ժամկետի ընթացքը	68
Ինչպե՞ս է կարգավորվում հայցային վաղեմության ժամկետների ընթացքը դատարանի կողմից հայցն առանց քննության թողնելու դեպքում	69
Դատարանն իրավունք ունի՞, արդյոք, վերականգնել հայցային վաղեմության ժամկետները, թե ոչ	69
Կա՞ն արդյոք պահանջներ, որոնց վրա հայցային վաղեմությունը չի տարածվում	69

ԳԼՈՒԽ 4

Դատական ծանուցումներ

Ինչպե՞ս է գործին մասնակցող անձը տեղեկացվում դատական նիստի կամ առանձին դատավարական գործողությունների կատարման ժամանակի, վայրի ու տեղի մասին	70
Ի՞նչ բովանդակություն պետք է ունենա քաղաքացուն ուղարկվող ծանուցագիրը	70
Ինչպե՞ս է ծանուցագիրը հանձնվում գործին մասնակցող անձին, եթե վերջինս փոխել է բնակության վայրը	71

ԲԱԺԻՆ 8

Պաշտպանը քրեական դատավարությունում

Ո՞վ է պաշտպանը քրեական դատավարությունում	72
Ե՞րբ է անձը պաշտպանի իրավավիճակ ձեռք բերում	72
Ե՞րբ է պաշտպանը դադարում որպես այդպիսին մասնակցել քրեական գործով վարույթին	72
Ո՞ր դեպքերում է պարտադիր պաշտպանի մասնակցությունը քրեական գործով դատավարության ընթացքում	72
Ինչպե՞ս է պաշտպանը մասնակից դառնում քրեական գործի քննությանը	73
Ինչպե՞ս է իր իրավավիճակը հաստատում պաշտպանը	74
Կարո՞ղ է կասկածյալը կամ մեղադրյալը իրաժարվել պաշտպանից և իր իրավունքներն ու շահերը պաշտպանել ինքնուրույն	74
Պաշտպանն ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ ունի քրեական դատավարությունում	75
Ի՞նչ է իրենից ներկայացնում հանրային պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում	77
Ի՞նչ է իրենից ներկայացնում հանրային պաշտպանի գրասենյակը	77

ԲԱԺԻՆ 9
Գույքային հարցերը և անձանց պաշտպանությունը
քրեական դատավարությունում

ԳԼՈՒԽ 1

Քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում

Անձը կարո՞ղ է, արդյոք, քաղաքացիական հայց հարուցել քրեական դատավարության ընթացքում	79
Իրավունք ունի՞ անձը պահանջել վերականգնելու հանցագործության հետևանքով իրեն պատճառված վնասները (քաղաքացիական հայց հարուցել) քաղաքացիական դատավարության կարգով, եթե այն չի հարուցել քրեական դատավարության կարգով՝ հանցագործության վերաբերյալ գործի քննության ժամանակ	79
Անձը ե՞րբ կարող է քրեական դատավարության ընթացքում հարուցել քաղաքացիական հայց	80
Կարո՞ղ է, արդյոք, անձը հրաժարվել քաղաքացիական հայցից	80
Արդյոք դատարանը կարո՞ղ է իր նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել գույքային վնասի հատուցման հարցը լուծելու համար	80

ԳԼՈՒԽ 2

Աշխատանքի վարձատրությունը և ծախսերի հատուցումը քրեական դատավարությունում

Կարո՞ղ են, արդյոք, հատուցվել քրեական դատավարությանը մասնակցած անձի կրած ծախսերը	81
---	----

ԳԼՈՒԽ 3

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը

Պաշտպանվա՞ծ են, արդյոք, քրեական դատավարությանը մասնակցող անձինք, թե ոչ	82
Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության ինչպիսի՞ միջոցներ են նախատեսված	83
Ինչպիսի իրավունքներ ու պարտականություններ ունի պաշտպանվող անձը քրեական դատավարությունում	84
Ե՞րբ և ինչպե՞ս կարող են դադարեցվել քրեական դատավարությանը մասնակցող անձի պաշտպանության միջոցները	85

Հայցադիմումի տիպային օրինակ	86
Հայցի ապահովման մասին միջնորդության տիպային օրինակ	88
Ծանոթագրություն	90

ՆԱԽԱԲԱՆ

Արդարադատության ճիշտ և թափանցիկ իրականացումը ենթադրում է մի կողմից խախտված իրավունքների վերականգնում կամ պաշտպանություն, իսկ մյուս կողմից՝ դատարանների և դատական իշխանության հանդեպ վստահության ձևավորում: Նշված բաղադրիչների իրագործման համար անհրաժեշտ գրավական է համարվում արդարադատության մատչելիության սկզբունքի ապահովումը:

Սույն աշխատանքում ներկայացված են արդարադատության իրականացման գործընթացի հետ կապված այնպիսի հարցեր, որոնց պատասխանների իմացությունը, մեր կարծիքով, քաղաքացիների համար առավել մատչելի կդարձնի դատարանը, և մեր ընթերցողը նվազագույն տեղեկություններ կունենա այն մասին, թե որ դեպքերում, ինչպես և որ դատարան դիմել: Գրքույկն ընթերցողին հնարավորություն է ընձեռում տեղեկանալ նաև իր դատավարական իրավունքների, ինչպես նաև դատական ծախսերի ու այլ համանման հարցերի մասին:

Մեթոդոլոգիական տեսանկյունից աշխատանքի բովանդակության մեջ ընդգրկված են ՀՀ օրենսդրության մաս կազմող այնպիսի դրույթներ, որոնք համընդհանուր նշանակություն ունեն թե՛ քրեական և թե՛ քաղաքացիական դատավարությունների համար, ինչպես նաև ճյուղային իրավունքներից՝ արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության շահերի տեսանկյունից առավել առանցքային դրույթները:

Վերը նշված հարցերը շարադրված են ըստ բաժինների և որոշակի տրամաբանական հաջորդականությամբ:

Քաղաքացիների դատական պաշտպանության իրավունքը միջազգայնորեն ճանաչված սկզբունք է, որն իր արտացոլումն է գտել բազմաթիվ միջազգային իրավական ակտերում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածում ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում իրավասու ազգային դատարանի միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»: Այս դրույթն իր ամրապնդումն է գտել նաև 1950թ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում: Այն իր կարգավորումն է ստացել նաև ՀՀ Սահմանադրությամբ:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների ու ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածը, նախատեսելով յուրաքանչյուրի դատական պաշտպանության իրավունքը, միաժամանակ սահմանում է, որ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից: Թերևս միջազգայնորեն ճանաչված այս սկզբունքի կիրառումը կկորցնեի իր արժեքը կամ արդյունավետ չէր կիրառվի, եթե չհռչակվեր կամ չկիրառվեր նաև օրենքի և դատարանի առջև

քաղաքացիների հավասարության սկզբունքը: Այս մասին Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ հոդվածում սահմանված է. «Օրենքի առջև բոլոր մարդիկ հավասար են և առանց խտրականության ունեն օրենքով հավասար պաշտպանության իրավունք: Բոլոր մարդիկ ունեն սույն հռչակագիրը խախտող որևէ խտրականությունից և նման խտրականության սադրանքից պաշտպանվելու հավասար իրավունք»: Այս սկզբունքն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում, համաձայն որի՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդանությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Քաղաքացիների հավասարությունն օրենքի և դատարանի առջև նախատեսված է նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածներով:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը նախատեսում է յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Միաժամանակ սահմանվում է, որ օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Նշված զաղափարը դարձյալ բխում է միջազգային իրավական ակտերից, մասնավորապես՝ «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածից:

Այսպիսով, արդարադատության պատշաճ իրականացումը պահանջում է դրա մատչելիության ապահովում, որն էլ իր հերթին ենթադրում է քաղաքացիների համար արդյունավետ իրավական օգնության եղանակների ապահովում: Այս իմաստով, ներկայացվող աշխատանքը կարող է մեր համեստ ներդրումը համարվել այդ առաքելության իրականացման գործին:

ՎԱՐՆ ԵՆԳԻՐԱՐՅԱԼ

**ՀՀ դատավորների միության
գործադիր տնօրեն,
ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,
իրավագիտության թեկնածու**

ԲԱԺԻՆ 1

Հայաստանի Հանրապետության դատական համակարգը

Հայաստանի Հանրապետությունում ինչպիսի՞ դատական համակարգ է գործում:

ՀՀ հիմնական օրենքի 91-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Իսկ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Ո՞րն է Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով:

Ո՞ր դատարանն է իրականացնում սահմանադրական արդարադատություն և ինչպիսի՞ իրավասություններ ունի այն:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը:

Սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից:

ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

2) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.

3) լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը.

3.1) լուծում է հանրապետության նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

4) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում հանրապետության նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները.

5) եզրակացություն է տալիս հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

6) եզրակացություն է տալիս հանրապետության նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին.

7) եզրակացությունն է տալիս Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.

8) եզրակացությունն է տալիս համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին.

9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Ուլքե օր կարող են դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

ՀՀ սահմանադրական դատարան կարող են դիմել՝

1) հանրապետության նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

2) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

3) պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4) կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով.

6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.

7) դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.

8) մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.

9) հանրապետության նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ և 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:

Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Որո՞նք են ՀՀ առաջին ատյանի դատարանները:

Առաջին ատյանի դատարանները ընդհանուր իրավասության դատարաններն են:

Հայաստանի Հանրապետությունում կա՞ մասնագիտացված դատարան:

Հայաստանի Հանրապետությունում միակ մասնագիտացված դատարանը ՀՀ վարչական դատարանն է:

- Որո՞նք են վերաքննիչ դատարանները:**
Վերաքննիչ դատարաններն են՝
1) քրեական վերաքննիչ դատարանը.
2) քաղաքացիական վերաքննիչ դատարանը:

ԳԼՈՒԽ 1

Ընդհանուր իրավասության դատարաններ

Ինչպիսի՞ իրավասություններ ունի ընդհանուր իրավասության դատարանը:

Ընդհանուր իրավասության դատարանին ենթակա են բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի:

Ընդհանուր իրավասության դատարանը քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ:

Ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

Ե՞րբ են ուժի մեջ մտնում ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը:

Ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Սակայն օրենքով կարող է նախատեսվել այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ:

Ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերի ուժի մեջ մտնելու ինչպիսի՞ այլ ժամկետներ են սահմանված:

ՀՀ դատական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ եթե գումարը բռնագանձելու պահանջի մասին կամ դրամական արտահայտությամբ գնահատված հայցի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը, ապա ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե դատավարական օրենքով այլ բան նախատեսված չէ:

Ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը բացառիկ դեպքերում կարող են հրապարակման պահից դատարանի կողմից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ կողմի համար: Նման ակտերը ենթակա են բողոքարկման նույն դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած ակտերի համար սահմանված կարգով:

Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերով ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը վերջնական է, վերանայման ենթակա չէ և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Որտե՞ղ են տեղակայված ընդհանուր իրավասության դատարանները:

Ընդհանուր իրավասության դատարանները տեղակայված են Երևան քաղաքում և մարզերում:

Երևան քաղաքում գործում են ընդհանուր իրավասության հետևյալ դատարանները.

1) **Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝** դատարանի նախագահի և 7 դատավորի կազմով.

(նստավայրը՝ քաղաք Երևան, Մովսես Խորենացի 162 ա.

հեռախոս՝ (010) 57-39-03)

2) **Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝** դատարանի նախագահի և 13 դատավորի կազմով.

(նստավայրը՝ քաղաք Երևան, Տիգրան Մեծի 23/1 փողոց.

հեռախոս՝ (010) 54-79-15)

3) **Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝** դատարանի նախագահի և 5 դատավորի կազմով.

(նստավայրը՝ քաղաք Երևան, Նազարբեկյան թաղամաս 40.

հեռախոս՝ (010) 39-95-96)

4) **Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝** դատարանի նախագահի և 9 դատավորի կազմով. (նստավայրը՝

քաղաք Երևան, Գյուլիքեխյան 20 փողոց.

հեռախոս՝ (010) 64-94-65)

5) **Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝** դատարանի նախագահի և 9 դատավորի կազմով. (նստավայրը՝ քաղաք Երևան, Հրաչյա Ներսիսյան 10.

հեռախոս՝ (010) 24-08-31)

6) **Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը՝** դատարանի նախագահի և 6 դատավորի կազմով. (նստավայրը՝ քաղաք Երևան, Արշակունյաց պողոտա 24/1.

հեռախոս՝ (010) 44-14-30)

7) **Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանը՝** դատարանի նախագահի և 5 դատավորի կազմով (նստավայրը՝ քաղաք Երևան, Օտյան փողոց 53/2.

հեռախոս՝ (010) 74-59-50):

Մարզերում գործում են ընդհանուր իրավասության հետևյալ դատարանները՝

1) **Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝** դատարանի նախագահի և 9 դատավորի կազմով. (նստավայրերը՝

քաղաք Չրագղան, Միկրոշրջան թաղամաս.

հեռախոս` (0223) 2-32-96.

քաղաք Չարենցավան, 6-րդ թաղամաս, 19 շենք.

հեռախոս` (0226) 4-50-54, 4-51-56.

քաղաք Եղվարդ, Երևանյան 15.

հեռախոս` (0224) 2-16-15, 2-16-12.

քաղաք Աբովյան, Էլարի 8.

հեռախոս` (0222) 2-46-01):

2) Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը` դատարանի նախագահի և 10 դատավորի կազմով. (նստավայրերը`

քաղաք Արտաշատ, Շահումյան 19.

հեռախոս` (0235) 2-20-35.

քաղաք Մասիս, Արարատյան 3.

հեռախոս` (0236) 4-59-20.

քաղաք Վեդի, Թումանյան փողոց.

հեռախոս` (0234) 2-42-78, 2-46-48.

քաղաք Եղեգնաձոր, Միկոյան 18.

հեռախոս` (0281) 2-27-70.

քաղաք Վայք, Լենինի 1.

հեռախոս` (0282) 2-16-00):

3) Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանը`

դատարանի նախագահի և 7 դատավորի կազմով. (նստավայրերը`

քաղաք Արմավիր, Հանրապետության 41.

հեռախոս` (0237) 6-22-65.

քաղաք Էջմիածին, Կամոյի 15.

հեռախոս` (0231) 5-30-85):

4) Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը`

դատարանի նախագահի և 5 դատավորի կազմով. (նստավայրերը`

քաղաք Աշտարակ, Էջմիածնի խճուղի 65.

հեռախոս` (0232) 3-65-08.

քաղաք Ապարան, Գայի 25.

հեռախոս` (0252) 2-43-81.

քաղաք Թալին, Խանջյան 13.

հեռախոս` (0249) 2-28-69):

5) Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը`

դատարանի նախագահի և 12 դատավորի կազմով. (նստավայրերը`

քաղաք Գյումրի, Անկախության հրապարակ 7.

հեռախոս` (0312) 5-01-83.

քաղաք Արթիկ, Բաղրամյան 40.

հեռախոս` (0244) 5-20-24.

քաղաք Մարալիկ, Անկախության հրապարակ, վարչական շենք.

հեռախոս` (0242) 2-18-98.

գյուղ Աշոցք. հեռախոս` (0245) 2-16-29):

6) Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը`

դատարանի նախագահի և 12 դատավորի կազմով. (նստավայրերը` քաղաք Վանաձոր, Մխիթար Գոշի 6.

հեռախոս` (0322) 2-40-31.

քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի 8.

հեռախոս` (0253) 2-23-04, 2-23-01.

քաղաք Տաշիր, Խանջյան 5.

հեռախոս` (0254) 2-25-15.

քաղաք Սպիտակ, Այգեստան 1.

հեռախոս` (0255) 2-22-03.

քաղաք Ստեփանավան, Գարեգին Նժդեհի 5.

հեռախոս` (0256) 2-22-19):

7) Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը`

դատարանի նախագահի և 5 դատավորի կազմով. (նստավայրերը` քաղաք Իջևան, Երիտասարդական 1.

հեռախոս` (0263) 4-08-41, 4-08-90.

քաղաք Դիլիջան, Կալինինի 233.

հեռախոս` (0268) 2-26-66.

քաղաք Նոյեմբերյան, Կամոյի 3.

հեռախոս` (0266) 2-22-02, 2-22-03.

քաղաք Բերդ, Նժդեհի 1.

հեռախոս` (0267) 2-11-10, 2-11-12):

8) Փեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը`

դատարանի նախագահի և 8 դատավորի կազմով. (նստավայրերը` քաղաք Գավառ, Սայառյան 18.

հեռախոս` (0264) 2-36-01, 2-23-03.

քաղաք Սևան, Գործարանային 8ա.

հեռախոս` (0261) 2-37-39, 2-31-42.

քաղաք Մարտունի, Շահումյան 5.

հեռախոս` (0262) 4-48-47.

քաղաք Վարդենիս, Ռոմանի փողոց, քաղաքապետարանի շենք.

հեռախոս` (0269) 2-27-62.

քաղաք ճամբարակ, Պարույր Սևակի 4.

հեռախոս` (0265) 2-22-77):

9) Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը`

դատարանի նախագահի և 8 դատավորի կազմով (նստավայրերը` քաղաք Կապան, Երկաթուղայինների 4.

հեռախոս` (0285) 2-75-58.

քաղաք Գորիս, Սյունիքի 8.

հեռախոս` (0284) 2-29-91.

քաղաք Սիսիան, Գարեգին Նժդեհի 6.
հեռախոս՝ (02830) 32-20):

Դատարաններում գործերը քննվում են մե՞կ դատավորի կողմից, թե՞ կոլեգիալ կազմով:

Ընդհանուր իրավասության դատարանում գործերը քննվում են դատավորի կողմից՝ միանձնյա:

Գործերը միանձնյա քննելիս դատավորը հանդես է գալիս որպես դատարան:

Վերաքննիչ դատարանում գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, այլ դատական ակտերի դեմ բողոքը՝ միանձնյա:

Վարչական գործերը վարչական դատարանում առաջին անգամ ըստ էության քննվում են միանձնյա, բացառությամբ, եթե գործի վերաբերյալ կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտն օրենքով ենթակա չէ բողոքարկման, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում: Այդ դեպքերում վարչական գործերը քննվում են կոլեգիալ՝ հինգ դատավորի կազմով: Վարչական գործերով վճռաբեկ դատարանի կողմից բեկանված գործն ըստ էության լուծող դատական ակտերը վարչական դատարանում քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ՝ վճռաբեկ դատարանի համապատասխան պալատի նախագահի և պալատի դատավորների կազմով: Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները վճռաբեկ դատարանը քննում է կոլեգիալ՝ վճռաբեկ դատարանի կազմով:

ԳԼՈՒԽ 2 Վարչական դատարան

Ինչպիսի՞ իրավասություն ունի վարչական դատարանը:

Վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

Վարչական դատարանի վճիռները կարող են բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով: Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում վարչական դատարանը կայացնում է դատական ակտեր, որոնք վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Վարչական դատարանի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքն է:

Որտե՞ղ է տեղակայված վարչական դատարանը:

Վարչական դատարանը դատարանի նախագահի և 19 դատավորի կազմով (կենտրոնական մատակարար՝

քաղաք Երևան, Գարեգին Նժդեհի 23, հեռախոս՝ (010) 44-71-21 (230), մատակարարերը մարզերում՝

քաղաք Գյումրի, Անկախության հրապարակ 7, հեռախոս՝ (0312) 5-70-98,
քաղաք Վանաձոր, Մխիթար Գոշի 6, հեռախոս՝ (0322) 2-32-35,
քաղաք Սևան, Գործարանային 8ա, հեռախոս՝ (0261) 2-01-49,
քաղաք Վեդի, Արարատյան 55, հեռախոս՝ (0234) 2-27-20,
քաղաք Կապան, Երկաթուղայինների 4, հեռախոս՝ (0285) 2-00-04,
քաղաք Էջմիածին, Կամոյի 15, հեռախոս՝ (0231) 5-36-01:

Ե՞րբ են ուժի մեջ մտնում վարչական դատարանի դատական ակտերը:

Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Օրենքով կարող է նախատեսվել այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ:

Վարչական դատարանի միջանկյալ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետները սահմանվում են դատավարական օրենսդրությամբ:

Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը բացառիկ դեպքերում կարող են հրապարակման պահից դատարանի կողմից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ կողմի համար: Նման ակտերը ենթակա են բողոքարկման նույն դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած ակտերի համար սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 3

Վերաքննիչ դատարաններ

Ի՞նչ վերաքննիչ դատարաններ են գործում Հայաստանի Հանրապետությունում և ի՞նչ իրավասություններ ունեն:

Հայաստանի Հանրապետությունում գործում է երկու վերաքննիչ դատարան՝

- 1) վերաքննիչ քաղաքացիական դատարանը,
- 2) վերաքննիչ քրեական դատարանը:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը գործում է դատարանի նախագահի և 15 դատավորի կազմով (նստավայրը՝ քաղաք Երևան, Գարեգին Նժդեհի 23, հեռախոս՝ (010) 44-84-04 (307)):

Վերաքննիչ քրեական դատարանը գործում է դատարանի նախագահի և 15 դատավորի կազմով (նստավայրը՝ քաղաք Երևան, Գարեգին Նժդեհի 23, հեռախոս՝ (010) 44-88-94 (107)):

Վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը:

Վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում:

Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերաքննիչ դատարանի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքն է:

Ե՞րբ են օրինական ուժի մեջ մտնում վերաքննիչ դատարանի դատական ակտերը:

Վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Վերաքննիչ բողոք բերելու ի՞նչ ժամկետներ են սահմանված:

Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

Դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

Այն բացառիկ դեպքերում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտերը հրապարակման պահից դատավորի կողմից հայտարարվել են օրինական ուժի մեջ մտած, այդ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում:

Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը կարող է ընդունվել քննության այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը կամ առկա են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ:

Գործի քննությանը չմասնակցած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին: Գործի քննությանը չմասնակցած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, չեն կարող համապատասխան բողոք ներկայացնել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի: Սույն նորմը չի տարածվում քրեական գործերի վրա:

Ովքե՞ր իրավունք ունեն բերելու վերաքննիչ բողոք:

Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) գործին մասնակցող անձինք.

2) դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

3) գործի քննությանը չմասնակցած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Ի՞նչը կարող է հանդիսանալ վերաքննիչ բողոք բերելու հիմք:

Վերաքննիչ բողոք բերելու համար հիմք է դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:

Քրեական գործով վերաքննիչ բողոքն ինչպիսի՞ բովանդակություն պետք է ունենա:

Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝

1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) տվյալներ՝ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը, բնակության կամ գտնվելու վայրը.

3) դատական ակտը, որը բողոքարկվում է, և այն կայացրած դատարանի անվանումը.

4) նշում այն մասին, թե դատական ակտը բողոքարկվում է ամբողջությամբ, թե մի մասով.

5) բողոքի հիմքերը և պահանջը.

5.1) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.

6) առկայության դեպքում՝ այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, որոնք պետք է հետազոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում նաև առաջին ատյանի դատարանում նախօրոք չհետազոտված ապացույցները.

7) բողոքին կցվող նյութերի ցանկը.

8) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը:

Քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքն ինչպիսի՞ բովանդակություն պետք է ունենա:

Վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն՝

1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) բողոքը բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները).

3) դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը.

4) նշում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտման մասին, որը ազդել է գործի ելքի վրա.

5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.

6) բողոք բերող անձի պահանջը.

7) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Եթե առաջին ատյանի դատարանում բողոք բերած անձը զրկված է եղել բողոքարկվող հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից, ապա վերաքննիչ բողոքում պետք է նշի նաև իր դիրքորոշումը բողոքարկվող հարցի վերաբերյալ:

Վերաքննիչ բողոքը ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի լիազորությունները հավաստվում են օրենքով սահմանված կարգով:

Բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

Վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում: Վերաքննիչ բողոքի հիմքերը չեն կարող փոփոխվել, լրացվել բողոքի քննության ընթացքում:

Ո՞ր դեպքերում քաղաքացիական գործերով չի կարող վերաքննիչ բողոք բերվել:

Քաղաքացիական գործերով վերաքննիչ բողոք չի կարող բերվել.

1. Եթե կողմերը առաջին ատյանի դատարանում կնքել են վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն: Նման համաձայնություն կնքած կողմի (կողմերի) ներկայացրած վերաքննիչ բողոքը վերաքննիչ դատարանի կողմից ենթակա է քննության միայն նման համաձայնություն կնքած մյուս կողմի համաձայնության դեպքում:

2. Գույքային պահանջով քաղաքացիական գործերով վերաքննությունը թույլատրելի է միայն, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը:

Դատավարական օրենքով կարող են սահմանվել բողոք բերելու լրացուցիչ սահմանափակումներ:

Փաստի հարցում քաղաքացիական գործերով վերաքննության ինչպիսի՞ սահմաններ կան:

Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից

անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Վերաքննիչ դատարանն իրավունք չունի քննության առարկա դարձնելու վերաքննիչ բողոքում որևէ հարցի վերաբերյալ արտահայտված այն դիրքորոշումը, որը չի հայտնվել առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ:

Բացառություն է կազմում այն դեպքը, երբ բողոք բերող անձը գրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

Ի՞նչ լիազորություններ ունի վերաքննիչ դատարանը:

Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված է, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը:

Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.

4) մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները, իսկ քրեական գործերով նաև քրեական վերաքննիչ դատարանին նոր ներկայացված ապացույցների հիման վրա նրա հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

Սիջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԳԼՈՒԽ 4

Վճռաբեկ դատարան

Ո՞րն է վճռաբեկ դատարանի գործունեության նպատակը և ի՞նչ իրավասություն ունի:

Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Իր այդ առաքելությունն իրականացնելիս վճռաբեկ դատարանը պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը:

Վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերանայում է վերաքննիչ և վարչական դատարանների դատական ակտերը:

Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտն առերևույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ կամ եթե առկա են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ:

Վճռաբեկ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է ստորադաս դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը և վերաքննիչ դատարանի կողմից միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները:

Վճռաբեկ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում:

Վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վճռաբեկ դատարանի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքն է:

Վճռաբեկ դատարանի դատական ակտերը ե՞րբ են մտնում օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Վճռաբեկ դատարանի ակտերը ենթակա են պաշտոնական հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»:

Ի՞նչ կառուցվածք ունի վճռաբեկ դատարանը և որտե՞ղ է այն գտնվում:

Վճռաբեկ դատարանը կազմված է վճռաբեկ դատարանի նախագահից, պալատների նախագահներից և տասնչորս դատավորից (նստավայրը՝ քաղաք Երևան, Վազգեն Սարգսյան 5, հեռախոս՝ (010) 511-745):

Վճռաբեկ դատարանն ունի երկու պալատ՝

- 1) քրեական պալատ,
- 2) քաղաքացիական և վարչական պալատ:

Յուրաքանչյուր պալատ կազմված է պալատի նախագահից և պալատի դատավորներից: Քրեական պալատը կազմված է պալատի նախագահից և պալատի հինգ դատավորներից, իսկ քաղաքացիական պալատը կազմված է պալատի նախագահից և պալատի ինը դատավորներից:

Վճռաբեկ դատարանին ներկայացված վճռաբեկ բողոքները քննության ընդունելու հարցը լուծում է վճռաբեկ դատարանի համապատասխան պալատը:

Պալատի այդ որոշումները կայացվում են միաձայն և բողոքարկման ենթակա չեն:

Դատավորներից թեկուզ և մեկի այլ կարծիք ունենալու դեպքում վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը ենթակա է լուծման վճռաբեկ դատարանի ողջ կազմով:

Վճռաբեկ բողոք բերելու ի՞նչ ժամկետներ են սահմանված:

Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի և վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով կամ այն դեպքերի, երբ գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու սկսած այն օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին:

Քրեական գործերով վճռաբեկ բողոքը կարող է բերվել վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող դատական ակ-

տերի դեմ՝ այդ ակտը ստանալու պահից 15-օրյա ժամկետում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, իսկ անձի վիճակի վատթարացման հիմքով՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

Ովքե՞ր վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն:

Քաղաքացիական և վարչական գործերով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք և գլխավոր դատախազն ու նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը և վերաքննիչ դատարան բողոքարկված միջանկյալ դատական ակտերի կապակցությամբ վերաքննիչ դատարանի ընդունած որոշումները բողոքարկելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

Քրեական գործերով վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները վճռաբեկ դատարան բողոքարկելու իրավունք ունեն՝ դատավարության մասնակիցները, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դիմողները, գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Ի՞նչը կարող է հանդիսանալ վճռաբեկ բողոք բերելու հիմք:

Վճռաբեկ բողոք բերելու համար հիմք է դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, ինչպես նաև նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:

Քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքն ինչպիսի՞ բովանդակություն պետք է ունենա:

Վճռաբեկ բողոքում պետք է նշվեն՝

- 1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.
- 2) բողոք բերող անձի անունը (անվանումը).
- 3) վճիռ կայացրած դատարանի անվանումը, գործի համարը, վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), վեճի առարկան.
- 4) բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, և նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, և դրանց հիմնավորումները, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.
- 5) նշում այն մասին, որ

5.1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

5.2) վերանայվող դատական ակտն առերևույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ

5.3) ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ.

5.4) առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք.

6) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Եթե վճռաբեկ բողոքը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա բողոքին կցվում է ներկայացուցչի՝ օրենքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը:

Բողոքին կցվում են սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը և բողոքի պատճենը՝ գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները:

Քրեական գործով վճռաբեկ բողոքն ինչպիսի՞ բովանդակություն պետք է ունենա:

Վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի՝

1) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.

2) տվյալներ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը, բնակության կամ գտնվելու վայրը.

3) դատավճիռը կամ այլ որոշումը, որը բողոքարկվում է, և այդ որոշումը կայացրած դատարանի անվանումը.

4) նշում այն մասին, թե դատավճիռը կամ այլ որոշումը բողոքարկվում է ամբողջությամբ, թե մի մասով.

5) պատճառաբանված մատնանշում այն մասին, թե որ նյութական կամ դատավարական իրավունքն է խախտվել, որը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ ինչ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ են առկա.

6) բողոք բերած անձի պահանջը.

6.1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

6.2) վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին, կամ

6.3) վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ.

7) բողոքին կցվող նյութերի ցանկը.

8) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը:

Ո՞ր դեպքերում չի կարող վճռաբեկ բողոք բերվել:

Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարա-

նուն, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Բացառություն են կազմում այն ակտերը, որոնք վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն:

Աճծը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ:

Ի՞նչ լիազորություններ ունի վճռաբեկ դատարանը:

Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը՝

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված է, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը:

Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ժամալը: Զբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը:

4) մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարծում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

6) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ:

7) նորմատիվ իրավական ակտերի վիճարկման գործերով փոփոխում է վարչական դատարանի դատական ակտը կամ մերժում վճռաբեկ բողոքը:

Միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԲԱԺԻՆ 2

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ի՞նչ իրավասություն ունի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավագրությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, որոնք սահմանափակվում են՝

- միջպետական գործերին առնչվող բողոքներով Կոնվենցիայի դրույթների մեկնաբանմամբ և կիրառմամբ (Կոնվենցիայի 33-րդ հոդված)։
- անհատական զանգատներով Կոնվենցիայի դրույթների մեկնաբանմամբ ու կիրառմամբ (Կոնվենցիայի 34-րդ հոդված)։
- Նախարարների կոմիտեի խնդրանքով Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանմանը վերաբերող իրավական հարցերի առնչությամբ խորհրդատվական եզրակացություններ տալով (Կոնվենցիայի 47-րդ հոդված)։

Ի՞նչ կառուցվածք ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և որտե՞ղ է այն գտնվում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 11-րդ լրացուցիչ արձանագրությամբ կատարված փոփոխությունների համաձայն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորների թիվը հավասար է Կոնվենցիայի մասնակից պետությունների թվին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1. Լիազումար նիստը.
2. Դատարանի նախագահը.
3. Մեծ պալատը.
4. Բաժանմունքները.
5. Պալատները.
6. Կոմիտեները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տեղակայված է Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում:

Ովքե՞ր կարող են դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Դատարանը կարող է (անհատական) զանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք այնդուրեք են, թե դարձել են Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:

Ի՞նչը կարող է հանդիսանալ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու հիմք և ի՞նչ ժամկետներ են սահմանված:

Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:

Ո՞ր դեպքերում դիմումը չի կարող քննվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

Դատարանը քննության չի ընդունում ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝

ա. անանուն է կամ,

բ. ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:

Դատարանն անընդունելի է համարում ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ այն անհամատեղելի է Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների դրույթների հետ, կամ ակնհայտորեն անհիմն է, կամ հանդիսանում է գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում:

Դատարանը մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում վերը նշված դեպքերում: Դատարանը կարող է դա անել քննության ցանկացած փուլում:

Ի՞նչ իրավական ուժ ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռը և ինչպիսի՞ իրավական հետևանքներ կարող է առաջացնել:

Եվրոպայի խորհրդին անդամակցող պետությունները՝ Բարձր պայմանավորվող կողմերը, պարտավորվում են կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որի կողմ են հանդիսանում: Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկում է դրա կատարումը:

Եթե Նախարարների կոմիտեն գտնում է, որ վերջնական վճռի կատարման վերահսկումը խոչընդոտում է վճռի մեկնաբանման խնդրով պայմանավորված, այն կարող է դիմում ներկայացնել Դատարան՝ հարցի մեկնաբանման վերաբերյալ որոշում կայացնելու պահանջով: Դիմում ներկայացնելու որոշումը կայացվում է Կոմիտեի իրավասու ներկայացուցիչների քվեների երկու երրորդ մեծամասնությամբ:

Եթե Նախարարների կոմիտեն գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմը իրաժարվում է կատարել այն գործի առումով վերջնական վճիռը, որի կողմ է հանդիսանում, այն կարող է տվյալ կողմին պաշտոնական ծանուցումից հետո և կոմիտեի իրավասու ներկայացուցիչների քվեների երկու երրորդ մեծամասնությամբ ընդունված որոշմամբ Դատարանին հարց հղել՝ արդյոք տվյալ կողմը չի կատարել իր պարտավորությունը:

Եթե Դատարանն այս հարցուն խախտում է գտնում, այդ գործը հղում է Նախարարների կոմիտե՝ ձեռնարկվելիք միջոցառումները քննարկելու նկատառումով: Եթե Դատարանը խախտում չի գտնում, այն գործը հղում է Նախարարների կոմիտե, որը փակում է գործի քննությունը (Կոնվենցիայի 39-րդ հոդվածում լրացուն նախատեսող՝ Արձանագրության 15-րդ հոդված):

ԲԱԺԻՆ 3

Ներկայացուցչություն

ԳԼՈՒԽ 1

Ներկայացուցչությունը դատարանում

Քաղաքացիները դատարանում կարող են գործերը վարել ներկայացուցիչների միջոցով:

Քաղաքացիները կարող են դատարանում իրենց գործերը վարել ինչպես անձամբ, այնպես էլ իրենց ներկայացուցիչների միջոցով:

Քաղաքացու մասնակցությունը գործին չի զրկում նրան՝ գործով ներկայացուցիչ ունենալու իրավունքից:

Ովքե՞ր կարող են ներկայացուցիչներ լինել դատարանում:

Դատարանում ներկայացուցիչ կարող է լինել ցանկացած քաղաքացի, որն ունի դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն:

Ե՞րբ է լիազորագիրը համարվում պատշաճ ձևակերպված:

Լիազորագիրը համարվում է պատշաճ ձևակերպված, երբ քաղաքացու տված լիազորագիրը վավերացրել է նոտարը կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և վավերացման ենթակա չէ:

Դատական նիստին ներկայացուցչի հետ մասնակցող կողմն իրավունք ունի իր ներկայացուցչի լիազորությունները հաստատելու դատարանի առջև՝ գրավոր սահմանելով վերջինիս լիազորությունների ծավալը:

Օրինական ներկայացուցչի լիազորությունները հաստատվում են իր կարգավիճակը հավաստող փաստաթղթով:

Ինչպիսի՞ լիազորություններ կարող է ունենալ ներկայացուցիչը:

Դատարանում գործը վարելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարելու դատավարական գործողություններ, բացառությամբ՝

- 1) ստորագրելու հայցադիմումը.
- 2) գործը հանձնելու արբիտրաժային տրիբունալին.
- 3) ամբողջովին կամ մասնակի հրաժարվելու հայցային պահանջներից և ընդունելու հայցը.
- 4) փոխելու հայցի առարկան կամ դրա հիմքը.
- 5) փոխելու հայցային պահանջների չափը.
- 6) կնքելու հաշտության համաձայնություն.
- 7) այլ անձի փոխանցելու լիազորությունները (վերալիազորում).
- 8) բողոքարկելու դատական ակտը.
- 9) դիմելու իրավասու անձանց՝ վճարեկ բողոք բերելու խնդրանքով:

Վերոնշյալ գործողություններից յուրաքանչյուրի կատարման համար ներկայացվողի տված լիազորագրում պետք է հատուկ նախատեսված լինի ներկայացուցչի այդ լիազորությունը:

Ովքե՞ր են օրինական ներկայացուցիչները:

Անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանում են նրանց ծնողները (որդեգրողները), խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք դատարան են ներկայացնում իրենց կարգավիճակը հավաստող փաստաթղթեր:

Այն գործով, որին պետք է մասնակցեր սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչված քաղաքացին, որպես նրա ներկայացուցիչ հանդես է գալիս նրա գույքի հավատարմագրային կառավարիչը:

Այն գործով, որին պետք է մասնակցեր մահացած կամ սահմանված կարգով մահացած ճանաչված քաղաքացու ժառանգը, եթե ժառանգությունը ոչ ոք դեռևս չի ընդունել, որպես ժառանգի ներկայացուցիչ հանդես է գալիս ժառանգական գույքի պահպանման և կառավարման համար նշանակված անձը:

Օրինական ներկայացուցիչները և ի պաշտոնե ներկայացուցչություն իրականացնող անձինք կարող են դատարանում գործը վարելը հանձնարարել իրենց կողմից որպես ներկայացուցիչ ընտրված մեկ այլ անձի:

ԳԼՈՒԽ 2

Ներկայացուցչություն և լիազորագիր

Ի՞նչ է ներկայացուցչությունը:

Ներկայացուցչությունը, դա անմիջականորեն ներկայացվողի համար մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ստեղծելն է, փոփոխելը ու դադարեցնելը:

Լիազորությունը կարող է ակնհայտորեն բխել նաև այն իրավիճակից, որում գործում է ներկայացուցիչը (մանրածախ առևտրում՝ վաճառողը, գանձապահը և այլն):

Ներկայացուցիչներ չեն այն անձինք, ովքեր թեև գործում են ի շահ ուրիշի, սակայն իրենց անունից (առևտրային միջնորդները, սնանկության ժամանակ՝ մրցութային կառավարիչները, ժառանգության ժամանակ՝ կտակակատարները և այլն), ինչպես նաև ապագայում հնարավոր գործարքների վերաբերյալ բանակցություններ վարելու լիազորությամբ օժտված անձինք:

Ներկայացուցիչը չի կարող ներկայացվողի անունից գործարք կնքել անձամբ իր նկատմամբ: Նա չի կարող գործարք կնքել նաև մեկ այլ անձի նկատմամբ, որի ներկայացուցիչն է միաժամանակ, բացառությամբ առևտրային ներկայացուցչության դեպքի:

Չի թուլյատրվում ներկայացուցչի միջոցով կնքել այնպիսի գործարք, որն իր բնույթով կարող է կնքվել միայն անձամբ, ինչպես նաև օրենքում նշված այլ գործարքներ:

Այլ անձի անուճից գործելու լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանազանցմամբ գործարքը կնքված է համարվում այն կնքած անձի անուճից և ի շահ նրա, եթե մյուս անձը (ներկայացվողը) հետագայում ուղղակի հավանություն չի տալիս տվյալ գործարքին:

Յետագայում ներկայացվողի կողմից գործարքին հավանություն տալը տվյալ գործարքով նրա համար քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ է ստեղծում, փոփոխում և դադարեցնում այն կնքելու պահից:

Ի՞նչ է լիազորագիրը:

Լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է ամմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նոտարի վավերացրած լիազորագրերին հավասարեցվում են՝

1) հոսպիտալներում, առողջարաններում և զինվորական այլ բուժական հաստատություններում բուժման մեջ գտնվող զինծառայողների ու մյուս անձանց լիազորագրերը՝ վավերացված այդ հաստատության պետի, բուժական մասի գծով նրա տեղակալի, ավագ կամ հերթապահ բժշկի կողմից.

2) զինծառայողների լիազորագրերը, իսկ զորամասերի, զորամիավորումների, զինվորական հաստատությունների և ռազմաուսումնական հաստատությունների տեղաբաշխման այն վայրերում, որտեղ չկան նոտարական գրասենյակներ ու նոտարական գործողություններ կատարող այլ մարմիններ, ինչպես նաև բանվորների և ծառայողների, նրանց ընտանիքների անդամների ու զինծառայողների ընտանիքների անդամների լիազորագրերը՝ վավերացված այդ զորամասերի, զորամիավորումների, զինվորական հիմնարկների կամ հաստատությունների հրամանատարի (պետի) կողմից.

3) ազատագրկման վայրերում գտնվող անձանց լիազորագրերը՝ վավերացված ազատագրկման համապատասխան հաստատության պետի կողմից.

4) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում գտնվող չափահաս գործունակ քաղաքացիների լիազորագրերը՝ վավերացված նման հաստատության տնօրինության կամ բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան մարմնի ղեկավարի (նրա տեղակալի) կողմից:

Աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, հեղինակների ու գյուտարարների վարձատրություն, կենսաթոշակներ, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ, այդ թվում՝ դրամական և ծանրոցային, ստանալու լիազորագիրը կարող է հաստատել նաև այն կազմակեր-

պությունը, որտեղ լիազորագիր ստացողն աշխատում կամ սովորում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը և այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա գտնվում է բուժման մեջ:

Յեռագրով, ինչպես նաև կապի այլ միջոցներով ուղարկված լիազորագիրը, եթե փաստաթղթի առաքումն իրականացնում է կապի աշխատակիցը, հաստատվում է կապի մարմնի կողմից:

Երրորդ անձինք իրավունք ունեն իսկական համարել իրենց նկատմամբ գործողություններ կատարելու համար տրված լիազորագիրը, որը լիազորողը լիազորվածին ուղարկել է առանց կապի պաշտոնական մարմինների՝ ֆաքսիմալ կամ այլ կապի միջոցով:

Մինչև ե՞րբ է ուժի մեջ լիազորագիրը:

Լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել:

Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Լիազորագիրը, որում նշված չէ դրա կատարման տարին, ամիսը և ամսաթիվը, առոչինչ է:

Արտասահմանում գործողություններ կատարելու համար նախատեսված և գործողության ժամկետի մասին նշում չպարունակող՝ նոտարի վավերացրած լիազորագիրը պահպանում է ուժը՝ մինչև լիազորագիր տված անձի կողմից այն վերացնելը:

Կարելի՞ է, արդյոք, գործողությունների կատարումը վերալիազորել այլ անձի:

Լիազորագիր ստացած անձը պետք է անձամբ կատարի այն գործողությունները, որոնց համար լիազորված է: Նա կարող է դրանց կատարումը վերալիազորել այլ անձի, եթե դրա համար լիազորված է լիազորագրով կամ հանգամանքների բերումով ստիպված է այդ անել լիազորողի շահերի պահպանման համար:

Լիազորություններն այլ անձի փոխանցողը պետք է այդ մասին տեղեկացնի լիազորողին և նրան անհրաժեշտ տեղեկություններ հաղորդի այն անձի վերաբերյալ, ում փոխանցված են լիազորությունները: Այս պարտականությունը չկատարած լիազորություն փոխանցողը պատասխանատվություն է կրում այն անձի գործողությունների համար, ում նա փոխանցել է լիազորությունը՝ որպես իր սեփական գործողությունների:

Վերալիազորման կարգով տրված լիազորագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել այն լիազորագրի գործողության ժամկետը, որի հիման վրա այն տրված է:

Ե՞րբ է դադարում լիազորագրի գործողության ժամկետը:

Լիազորագրի գործողությունը դադարում է, եթե՝

- 1) լիազորագրի ժամկետը լրացել է.
- 2) իրականացվել են լիազորագրով նախատեսված գործողությունները.

3) լիազորագրողը վերացրել է այն.

4) անձը, ում տրված է լիազորագիրը, հրաժարվել է.

5) դադարել է այն իրավաբանական անձը, որի անունից տրվել է լիազորագիրը.

6) դադարել է այն իրավաբանական անձը, որի անունով տրվել է լիազորագիրը.

7) մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տվել է լիազորագիրը.

8) մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ում տրվել է լիազորագիրը:

Լիազորագիր տվող անձը կարող է ցանկացած ժամանակ վերացնել լիազորագիրը կամ վերալիազորունը, իսկ անձը, ում տրված է լիազորագիրը, հրաժարվել դրանից: Այդ իրավունքներից հրաժարվելու մասին համաձայնությունն առաջինն է:

Լիազորագիր տված և այն հետագայում վերացրած անձը պարտավոր է դրա վերացման մասին տեղեկացնել լիազորագիր ստացած անձին, ինչպես նաև իրեն հայտնի երրորդ անձանց, որոնց առջև ներկայացուցչության համար տրված է լիազորագիրը:

Լիազորված անձի գործողությունների հետևանքով ծագած իրավունքները և պարտականությունները, որոնք ծագել են մինչև այն պահը, երբ նա իմացել է կամ պետք է իմանար լիազորագիրը դադարելու մասին, պահպանում են իրենց ուժը լիազորողի և նրա իրավահաջորդների համար երրորդ անձանց նկատմամբ: Այս կանոնը չի կիրառվում, եթե երրորդ անձը գիտեր կամ պետք է իմանար լիազորագրի գործողությունը դադարելու մասին:

Լիազորագիրը դադարելուց հետո լիազորված անձը կամ նրա իրավահաջորդները պարտավոր են անհապաղ վերադարձնել այն:

Լիազորագիրը դադարելու պահից ուժը կորցնում է նաև վերալիազորավորունը:

ԳԼՈՒԽ 3

Դատական ծախսեր

Ի՞նչ է իրենից ներկայացնում դատական ծախսը:

Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Ինչպե՞ս է որոշվում հայցագինը:

Հայցագինը որոշվում է՝

1) դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով՝ բռնագանձվող գումարի չափից.

2) գույքը պահանջելու հայցերով՝ գույքի շուկայական գնից:

Հայցագնի մեջ մտնում են նաև հայցադիմումում նշված տուժանքի (տուժանքի, տույժի) գումարները:

Մի քանի ինքնուրույն պահանջներից կազմված հայցագիրը որոշվում է բոլոր պահանջների ընդհանուր գումարով:

Հայցվորի կողմից հայցագիրը ճիշտ չնշելու դեպքում այն որոշում է դատարանը:

Ի՞նչ է պետական տուրքը:

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

Ե՞րբ է վճարվում պետական տուրք:

Պետական տուրքը վճարվում է՝

- 1) հայցադիմումների.
- 2) որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ գործին մասնակցելու մասին դիմումների.
- 3) իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների.
- 4) ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումների.
- 5) իրավաբանական անձանց և քաղաքացիներին սնանկ ճանաչելու մասին դիմումների.
- 6) արբիտրաժային տրիբունալի վճիռների հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին դիմումների.
- 7) դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Հայցագիրը մեծացնելու դեպքում պետական տուրքի չբավականացնող գումարը գանձվում է վճիռը կայացնելիս՝ ավելացված հայցագրին համապատասխան:

Հայցագիրը նվազեցնելու դեպքում վճարված տուրքը չի վերադարձվում:

Պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Պետական տուրքի վճարումից չեն կարող ազատվել անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները:

Դատարաններում քննվող բոլոր գործերով պետական տուրքը գանձվում է պետական բյուջե:

Ի՞նչ իրավունքներ ունեն պետական տուրք վճարողները:

Պետական տուրք վճարողներն իրավունք ունեն՝

- պահանջել պետական տուրք գանձող մարմնից՝ կատարելու տուրքի հաշվարկ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վերահաշվարկ,

- վերադասության, ինչպես նաև դատական կարգով գանգատարկել պետական տուրք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները,

- դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար,

- ստանալ պետական տուրքի վճարման մասին տեղեկանք,

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում պահանջել և ստանալ վերադարձման ենթակա պետական տուրքի գումարը:

Ի՞նչ պարտականություններ ունեն պետական տուրք վճարողները:

Պետական տուրք վճարողները պարտավոր են՝

- ժամանակին և լրիվ վճարել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական տուրքերը,

- պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը,

- ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրեն վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը,

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում պետական բյուջե վճարել պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով որո՞նք են պետական տուրքի գանձման օբյեկտները:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝

ա) դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.

բ) նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու համար.

գ) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար.

դ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար.

ե) հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար.

զ) պետական գրանցման համար.

է) մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար.

ը) գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտ-

ների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.

թ) ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

ժ) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար:

Որքա՞ն պետական տուրք պետք է վճարել դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար:

Առաջին ատյանի դատարաններին տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույթաչափերով.

1. հայցադիմումների և որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ գործին մասնակցելու մասին դիմումների համար`

ա) գույքային պահանջով` հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից.

բ) ոչ գույքային պահանջով` բազային տուրքի քառապատիկի չափով.

2. իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար` բազային տուրքի 500-ապատիկի չափով.

3. քաղաքացիներին սնանկ ճանաչելու դիմումների համար` բազային տուրքի 100-ապատիկի չափով.

4. հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների`

ա) անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու համար` բազային տուրքի չափով.

բ) այլ դիմումների համար` բազային տուրքի եռապատիկի չափով.

5. իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար` բազային տուրքի կրկնապատիկի չափով.

6. ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումների համար` բազային տուրքի չափով.

7. դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար`

ա) գույքային պահանջի գործերով` վերաքննիչ բողոքուն նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով.

բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով.

գ) հատուկ վարույթի գործերով՝ բազային տուրքի ութապատիկի չափով.

8. դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար՝

ա) գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից.

բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով.

գ) հատուկ վարույթի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով.

9. դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝ բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով.

10. գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝ բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով.

11. դատական նիստի համակարգչային պատրաստված յուրաքանչյուր ձայնագրման կրիչի բնօրինակից կրիչի (կոմպակտ լազերային պատճենահանված կրիչ տալու համար սկավառակի) համար՝ բազային տուրքի չափով:

Հայաստանի Հանրապետությունում որքա՞ն է սահմանված բազային տուրքը:

Պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ:

Բազային տուրքի չափ է սահմանված 1000 դրամը:

Կարո՞ղ է, արդյոք, քաղաքացին ազատվել պետական տուրքի վճարումից, եթե այո, ապա ո՞ր դեպքերում:

Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով.

բ) հայցվորները՝ ալիմենտի գանձման վերաբերյալ հայցերով.

գ) հայցվորները՝ խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

դ) սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի

և նպաստի գումարները վնաս պատճառողից զանձելու վերաբերյալ ռեզ-
րեսիվ հայցերով.

ե) հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված
նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

զ) հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրեն-
քով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով
դատարան տրվող դիմումների գծով.

է) ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

- գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատա-
րանի որոշումը բեկանելու, վճիռների կատարումը հետաձգելու կամ տարա-
ժամկետելու, վճիռների կատարման եղանակը և կարգը փոփոխելու, հայցերի
ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու
վերաբերյալ հայցերով.

- երևան եկած նոր հանգամանքների հետևանքով դատարանի վճիռը կամ
որոշումը վերանայելու վերաբերյալ գանգատներով.

- դատարանների վճիռներով նշանակված տուգանքների զիջման կամ
նվազեցման վերաբերյալ հայցերով.

- դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով,
բաց թողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաև հարկադիր կա-
տարողների գործողությունները զանգատարկելու վերաբերյալ դիմումներով.

- տուգանքների զիջումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարաննե-
րի որոշումների դեմ զանգատներով, դատարանների որոշումների դեմ մյուս
զանգատներով.

- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիա-
զորված մարմինների ընդունված որոշման դեմ զանգատներով.

- մշակութային արժեքները ապօրինի տիրապետողից հետ պահանջելու
մասին հայց ներկայացնելիս.

ը) դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության
վերաբերյալ հայցերով.

թ) վճռաբեկ զանգատ տվող անձի կողմից դատավարության ընթացքում
հանդես եկած դատավարության մասնակիցները և երրորդ անձինք՝ զանգա-
տին միանալու վերաբերյալ հայցերով.

ժ) դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտ-
ման վերաբերյալ դիմումներով.

ժա) դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործու-
նակ ճանաչելու վերաբերյալ դիմումներով.

ժբ) փախստականի կարգավիճակ հայցողները՝ փախստականի կարգա-
վիճակ ստանալու մասին դիմումի մերժումը բողոքարկելու վերաբերյալ հայ-
ցերով և բողոքներով.

ժգ) փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ իրենց խախտված
բնակարանային իրավունքները վերականգնելու վերաբերյալ հայցերով և բո-
ղոքներով.

ժդ) հոգեբուժական հաստատությունները՝ քաղաքացուն հոգեբուժական
հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներ-
ով.

ժե) դատական ակտերի հարկադիր կատարողները՝

- կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի վերանայման վերաբերյալ դիմումներով,

- օրենքով սահմանված դեպքերում պարտապանին անվճարունակ (սնանկ) ճանաչելու վերաբերյալ հայցադիմումներով.

ի) ժամանակավոր ադմինիստրացիայի (վարչակազմի) ղեկավարն ու լուծարային կառավարիչը՝ «Բանկերի սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց խնդիրներն իրագործելու նպատակով ներկայացվող հայցերով.

իա) պարտապանը՝ սեփական անվճարունակությունը (սնանկությունը) ճանաչելու համար ներկայացվող հայցադիմումներով.

իբ) դիմողները՝ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով.

իգ) մարդու իրավունքների պաշտպանը՝ իր կողմից ներկայացվող հայցերով:

Քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցի համար պետական տուրք չի գանձվում:

Կարող է, արդյոք, վերադարձվել վճարված պետական տուրքը:

Պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝

ա) եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ.

բ) դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձնելու կամ դրանց ընդունումը մերժելու, ինչպես նաև նոտարի կողմից նոտարական գործողությունների կատարումը մերժելու, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցումը և ուրիշ գործողությունների ու ծառայությունների կատարումը մերժելու դեպքում.

գ) տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը.

դ) եթե հայցի ենթադրական գինը, որից դատարանը գանձել է պետական տուրքը, գործի քննության ընթացքում ճշտվել է, որի հետևանքով պակասել է հայցի ընդհանուր գինը.

ե) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում.

զ) պետական տուրք գանձող պետական մարմնի կողմից այս կամ այն գործողության կատարումը մերժելու դեպքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ.

է) մինչև համապատասխան գործողությունների կատարման կամ ծառայությունների մատուցման ավարտման պահը, պետական տուրքը վճարողի կողմից համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ կատարելուց հրաժարվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրք գանձող մարմնի կողմից, սահմանված կարգով, արդեն

սկսվել է տևական բնույթ կրող համապատասխան գործողության կատարումը կամ ծառայության մատուցումը.

ը) անչափահաս երեխաներ չունեցող ամուսինների փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության ակտի գրանցման համար մուծված պետական տուրքը, եթե գրանցումը չի կատարվել ամուսինների հաշտվելու կամ նրանցից որևէ մեկի չներկայանալու պատճառով.

թ) քաղաքացիական կացության ակտերը կամ նոտարական կարգով վավերացված պայմանագրերը, ժառանգության իրավունքի մասին վկայականները և այլ փաստաթղթերը դատական կարգով անվավեր ճանաչվելու դեպքում.

ժ) արդյունաբերական սեփականության օբյեկտների գրանցման հայտերով փորձաքննության կայացրած որոշումների դեմ գանգատարկողի օգտին գանգատարկման խորհրդի կամ դատարանի որոշում ընդունելու դեպքում տվյալ մարմիններին գանգատ ներկայացնելու համար վճարված պետական տուրքը, եթե այդ մարմինների կողմից փորձաքննության որոշումը չեղյալ կամ անվավեր է ճանաչվել.

ժա) Հայաստանի Հանրապետությունից մեկնելու փաստաթղթեր ստանալու համար քաղաքացիների վճարած պետական տուրքերը՝ մինչև մեկնելու քույլտվություն ստանալը արտասահման մեկնելուց հրաժարվելու դեպքում:

Պետական տուրքի վերադարձման ի՞նչ կարգ գոյություն ունի:

Ֆինանսական մարմինները պետական տուրքը վերադարձնում են այն բյուջեից, որին հաշվանցվել է գումարը՝ ոչ ուշ, քան վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

Պետական տուրքը վերադարձվում է վճարողի դիմումի համաձայն, եթե այն ներկայացվել է ֆինանսական մարմին՝ պետական տուրքի կամ նրա մի մասը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում:

Պետական տուրքը կամ նրա մի մասը վերադարձնելու մասին ֆինանսական մարմին դիմում տալը կասեցնում է վերոհիշյալ ժամկետի ընթացքը:

Պետական տուրքը վերադարձնելու մասին դիմումին կցվում են դատարանի և պետական տուրք գանձող մյուս հիմնարկների տեղեկանքները՝ պետական տուրքը մասնակի կամ լրիվ վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին, ինչպես նաև պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերը:

Ինչպե՞ս են բաշխվում դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև:

Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան:

ԲԱԺԻՆ 4 ԸՆդդատություն

ԳԼՈՒԽ 1

Քաղաքացիական գործերի ընդդատությունը

Ո՞ր գործերն են ընդդատյա ընդհանուր իրավասության դատարանին:

Քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննում են պատասխանողի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարանները:

Դատարան դիմել ցանկացող անձը (հայցվորը) հայցադիմումը ո՞ր դատարան պետք է ներկայացնի:

Հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

Իրավունք ունի՞ դատարան դիմել ցանկացող անձը (հայցվորը) իր հայցողությամբ ընտրել իր գործը քննող դատարանը:

Տարբեր մարզերի տարածքներում բնակվող (գտնվող) պատասխանողների դեմ հայցը, հայցվորի ընտրությամբ, կարող է հարուցվել պատասխանողներից մեկի բնակվելու (գտնվելու) վայրի դատարան:

Պատասխանողի դեմ, որի գտնվելու վայրն անհայտ է, հայց կարող է հարուցվել նրա գույքի գտնվելու վայրի կամ նրա բնակության (գտնվելու) վերջին հայտնի վայրի դատարան:

Կատարման վայրի նշմամբ պայմանագրից բխող հայցը կարող է հարուցվել պայմանագրի կատարման վայրի դատարան:

Ալիմենտ բռնագանձելու կամ հայրությունը որոշելու վերաբերյալ հայցը կարող է հարուցվել հայցվորի բնակության վայրի դատարան:

Առողջությանը, ինչպես նաև կերակրողի մահվամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցը կարող է հարուցվել հայցվորի բնակության վայրի կամ վնասի պատճառման վայրի դատարան:

Օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված, ազատագրված դատապարտված անձանց դեմ անուսնալուծության վերաբերյալ հայցը, ինչպես նաև, եթե անչափահաս երեխան (երեխաները) գտնվում է հայցվորի մոտ, կարող է հարուցվել հայցվորի բնակության վայրի դատարան:

Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կիրառելու, չհեռանալու մասին ստորագրություն վերցնելու կամ վարչական տույժ նշանակելու հետևանքով քաղաքացուն պատճառված վնասները հատուցելու հետ կապված աշխատանքային և այլ իրավունքները վերականգնելու, գույքը կամ դրա արժեքը վերա-

դարձնելու վերաբերյալ հայցը կարող է հարուցվել հայցվորի բնակության վայրի դատարան:

Իրավաբանական անձի դեմ՝ նրա ներկայացուցչության կամ մասնաճյուղի գործունեությունից բխող հայցը կարող է հարուցվել համապատասխան ներկայացուցչության կամ մասնաճյուղի գտնվելու վայրի դատարան:

Յնարավո՞ր են դեպքեր, երբ քաղաքացիական գործը քննվի ոչ թե կողմերից որևէ մեկի բնակության վայրի, այլ վիճելի գույքի գտնվելու վայրի դատարանում:

Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է բացառիկ ընդդատությանը, համաձայն որի՝ որոշ գործեր քննելու իրավասություն ունեն միայն օրենքով նշված դատարանները՝ անկախ կողմերի բնակության վայրից և անկախ նրանց համաձայնությունից:

Յողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցերը հարուցվում են հողամասի, շենքի, շինության գտնվելու վայրի դատարան:

Ժառանգատուի պարտատերերի հայցերը հարուցվում են ժառանգական գույքի կամ նրա հիմնական մասի գտնվելու վայրի դատարան:

Գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցերը հարուցվում են այդ գույքի գտնվելու վայրի դատարան:

Բացառիկ ընդդատությունը չի կարող փոխվել կողմերի համաձայնությամբ:

Կարո՞ղ է, արդյոք, մի դատարան քննել մեկ այլ դատարանի կողմից քննության ենթակա քաղաքացիական գործ, թե ոչ, որ դեպքերում է դատարանը գործը հանձնում մեկ ուրիշ դատարան:

Դատարանը՝ ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննության՝

1) եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ.

2) գործը տվյալ դատարանում քննելու անհնարինության այլ դեպքերում:

Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Սեկ դատարանից մեկ այլ դատարան ուղարկված գործը պետք է քննի այն ստացած դատարանը:

ԳԼՈՒԽ 2

Քրեական գործերի ընդդատությունը

Ո՞ր քրեական գործերն են ընդդատյա առաջին ատյանի դատարաններին:

Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր):

Առաջին ատյանի դատարանները քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն են իրականացնում մինչդատական վարույթի նկատմամբ:

Ո՞ր գործերն են ընդդատյա քրեական վերաքննիչ դատարանին:

Քրեական վերաքննիչ դատարանին ընդդատյա են առաջին ատյանի դատարանների՝ օրինական ուժի մեջ չմտած, իսկ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բացառիկ դեպքերում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին վերաբերող գործերը:

Ո՞ր գործերն են ընդդատյա ՀՀ վճռաբեկ դատարանին:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատին ընդդատյա են վերաքննիչ դատարանների կայացրած և օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերաբերյալ գործերը, իսկ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բացառիկ դեպքերում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին վերաբերող գործերը:

Տարբեր տարածքներում կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերը ո՞ր տարածքի դատարանին են ընդդատյա:

Առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում:

Տևող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ այն ավարտվել է: Շարունակվող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենսգրքով չթույլատրված վերջին արարքը:

Այլ պետության տարածքում կատարված հանցանքի վերաբերյալ գործն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության վերջին վայրը, իսկ եթե չի հաջողվել պարզել այն, ապա այն դատարանին, որի դատական տարածքում ավարտվել է քրեական գործով մինչդատական վարույթը:

Այն քրեական գործերը միացնելիս, որոնք ընդդատյա են տարբեր դատարաններին, ո՞ր դատարանը պետք է քննի:

Երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում դրանք միացնելիս գործը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը:

Ինչպե՞ս պետք է վարվի դատարանը, երբ պարզի, որ իր վարույթն ընդունած գործն ընդդատյա է մեկ այլ դատարանի քննությանը:

Դատարանը, պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության:

Եթե դատարանն ընդդատության կարգի խախտումը հայտնաբերում է դատական քննության ժամանակ, ապա կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում: Կողմերից մեկի առարկության դեպքում գործի կատարված դատական քննությունը չեղյալ է համարվում, և գործն ուղարկվում է ըստ ընդդատության:

Կարո՞ղ է, արդյոք, փոխվել քրեական գործի տարածքային ընդդատությունը:

Քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս:

Ընդդատությունը փոխելու որոշումը համապատասխան դեպքերում ընդունում է գործը քննող դատարանը:

Ինչպե՞ս են լուծվում ընդդատության մասին առաջացած վեճերը:

Առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը:

ԲԱԺԻՆ 5

Գործին մասնակցող անձինք

ԳԼՈՒԽ 1

Քաղաքացիական դատավարության կողմերը

Ուլքե՞ր են քաղաքացիական դատավարության կողմերը և գործին մասնակցող անձինք:

Գործին մասնակցող անձինք են՝

- 1) կողմերը.
- 2) երրորդ անձինք.
- 3) դիմողները:

Քաղաքացիական դատավարության կողմերն են հայցվորը և պատասխանողը:

Հայցվորներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք հայց են հարուցել:

Պատասխանողներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցվել:

Կողմերն ունեն հավասար դատավարական իրավունքներ և կրում են հավասար դատավարական պարտականություններ:

Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունեն գործին մասնակցող անձինք:

Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն՝

- 1) ծանոթանալ գործի նյութերին, քաղվածքներ անել, ստանալ դրանց պատճենները.
- 2) հայտնել բացարկներ.
- 3) ներկայացնել ապացույցներ և մասնակցել դրանց հետազոտմանը.
- 4) հարցեր տալ, միջնորդություններ անել, բացատրություններ տալ դատարանին.
- 5) գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնել իրենց փաստարկները.
- 6) առարկել գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների, փաստարկների դեմ.
- 7) բողոքարկել դատական ակտերը.
- 8) օգտվել քաղաքացիական դատավարության օրենսգրքով իրենց վերապահված այլ դատավարական իրավունքներից:

Գործին մասնակցող անձինք կրում են օրենքով սահմանված դատավարական պարտականություններ:

Գործին մասնակցող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

Գործին մասնակցող անձինք սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար ենթակա են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հմարավոր են, արդյոք, դեպքեր, երբ գործին մասնակցեն մի քանի հայցվորներ կամ պատասխանողներ կամ գործի քննության ընթացքում կողմերի կազմում կատարվի փոփոխություն:

Հայցը կարող է հարուցվել մի քանի հայցվորի (համահայցվորներ) կողմից համատեղ կամ ընդդեմ մի քանի պատասխանողի (համապատասխանողներ):

Հայցվորներից և պատասխանողներից յուրաքանչյուրը դատավարությունում հանդես է գալիս ինքնուրույն:

Համահայցվորները կամ համապատասխանողները կարող են գործը վաբելը հանձնարարել իրենցից մեկին:

Դատարանը, գործի նախապատրաստման կամ քննության ժամանակ պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի կողմից, որին պատկանում է պահանջի իրավունքը կամ ոչ այն անձի դեմ, ով պետք է պատասխանի այդ հայցով, կարող է հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ նա կամ պատասխանողը փոխարինվեն պատշաճ հայցվորով կամ պատասխանողով:

Եթե հայցվորը համաձայն չէ իրեն ուրիշ անձով փոխարինելուն, ապա այդ անձը կարող է գործին մասնակցել որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ:

Եթե հայցվորը համաձայն չէ պատասխանողին ուրիշ անձով փոխարինելուն, դատարանը կարող է այդ անձին մասնակից դարձնել որպես երկրորդ պատասխանող:

Անպատշաճ կողմին փոխարինելուց հետո գործի քննությունն սկսվում է սկզբից:

Հայցվորը կարող է, արդյոք, փոխել հայցի հիմքը կամ առարկան, հայցային պահանջների չափը, կամ հրաժարվել հայցից:

Եթե գործով քննությունն իրականացվում է դատաքննության նախապատրաստության փուլով, ապա հայցվորն իրավունք ունի փոխելու հայցի հիմքը և առարկան, ավելացնելու կամ նվազեցնելու հայցային պահանջների չափը մինչև առաջին ատյանի դատարանում գործով դատաքննության սկսվելը: Հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննության ավարտը:

Իսկ **պատասխանողն** իրավունք ունի ամբողջովին կամ մասնակիորեն ընդունել հայցը:

Դատարանում կողմերը կարող են, արդյոք, կնքել հաշտության համաձայնություն:

Կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ:

Կողմերի միջև կայացված հաշտության համաձայնությունը ձևակերպվում է գրավոր:

Դատարանը, նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը, կողմերին պարզաբանում է դրա դատավարական հետևանքները:

Դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ ան-

ծանց իրավունքները և օրինական շահերը: Այդ դեպքերում դատարանը վեճը քննում է ըստ ելքայան:

Ի՞նչ է լինում, երբ կողմերից մեկը դուրս է գալիս դատավարությունից:

Դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու դեպքում (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում) դատարանը կատարում է այդ կողմի փոխարինում նրա իրավահաջորդով՝ այդ մասին նշելով որոշման մեջ: Իրավահաջորդություն հնարավոր է դատավարության ցանկացած փուլում:

Այն բոլոր գործողությունները, որոնք կատարվել են դատավարության ընթացքում մինչև իրավահաջորդի՝ գործի մեջ մտնելը, նրա համար պարտադիր են այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին այն անձի համար, որին փոխարինել է իրավահաջորդը:

ԳԼՈՒԽ 2 Չայցի հարուցում

Ի՞նչպե՞ս պետք է ներկայացվի հայցադիմումը և ի՞նչ բովանդակություն պետք է այն ունենա:

Չայցադիմումը ներկայացվում է գրավոր:

Չայցադիմումում պետք է նշվեն՝

1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը.

2) գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը, հայրանունը (այսուհետ՝ անուն), իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը՝ դրա առկայության դեպքում, հայցվոր իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը.

3) հայցագինը, եթե հայցը ենթակա է գնահատման.

4) հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները.

5) հայցապահանջները հաստատող ապացույցները.

6) բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը.

7) հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս, հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները.

8) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Չայցադիմումում կարող են նշվել նաև այլ տեղեկություններ, եթե դրանք անհրաժեշտ են վեճի ճիշտ լուծման համար, ինչպես նաև հայցվորի միջնորդությունները:

Չայցադիմումն ստորագրում է հայցվորը կամ նրա կողմից դրա համար լիազորված ներկայացուցիչը:

Ի՞նչ փաստաթղթեր է հարկավոր կցել հայցադիմումին:

Չայցադիմումին կցվում է սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթ կամ օրենքով նախատեսված

դեպքերում՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարածանկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

Հայցադիմումին կարող են կցվել նաև հայցապահանջները հաստատող ավացույցներ:

Եթե հայցադիմումն ստորագրված է հայցվորի ներկայացուցչի կողմից, դրան կցվում է նաև վերջինիս՝ հայց հարուցելու լիազորությունները հավաստող լիազորագիրը:

Պայմանագիր կնքելուն հարկադրելու մասին հայցադիմումին կցվում է համապատասխան պայմանագրի նախագիծը:

Հայցվորն իրավունք ունի՞, արդյոք, մեկ հայցադիմումում միացնել մի քանի հայցապահանջներ:

Հայցվորն իրավունք ունի մեկ հայցադիմումում միացնել միմյանց հետ կապված մի քանի պահանջներ:

Դատարանն իրավունք ունի մեկ վարույթում միացնել մի քանի միատեսակ գործեր, որոնց մասնակցում են միևնույն անձինք:

Դատարանն իրավունք ունի առանձին վարույթներում առանձնացնել մեկ կամ մի քանի միացված պահանջներ:

Գործերը միացնելու կամ պահանջներն առանձին վարույթներում առանձնացնելու մասին դատարանը կայացնում է որոշում:

Դատարանն իրավունք ունի՞, արդյոք, մերժելու հայցադիմումը, եթե այո, ապա ո՞ր դեպքերում:

Դատարանն իրավունք ունի մերժելու հայցադիմումը:

Դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝

- 1) վեճը ենթակա չէ դատարանում քննության.
- 2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ.
- 3) այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ.
- 4) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է արբիտրաժային տրիբունալի վճիռ, կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճիռ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի:

Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարո՞ղ է, արդյոք, բողոքարկվել:

Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան՝ հայցվորի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը:

Ո՞ր դեպքերում է դատարանը վերադարձնում հայցադիմումը:

Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե՝

1) չեն պահպանվել քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները.

2) հայցադիմումն ստորագրված չէ կամ ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնական դրու-թյունը նշված չէ.

3) գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին.

4) այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և մինևույն հիմքերով վեճի վե-րաբերյալ գործ.

5) չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նա-խատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկե-տելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն՝ բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը կամ նման միջնորդությունը մերժվել է.

6) մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատասխանող-ներին ուղղված միմյանց հետ չկապված պահանջներ.

7) մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն վերադարձնելու մասին.

8) ամուսինը կնոջ հղիության ժամանակ կամ երեխան ծնվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առանց կնոջ համաձայնության ամուսնալուծության դի-մում է տվել:

Դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում՝ հայցադիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում որոշումը, հայցադի-մումը և դրան կից փաստաթղթերը պատշաճ ձևով ուղարկելով հայցվորին:

Հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և եռօրյա ժամ-կետում դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարա-նում ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը:

Հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան հայցվորի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում: Որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկա-յացման օրը:

Մինչև դատաքննությունն սկսելը պատասխանողը կարո՞ղ է, արդյո՞ք, ծանոթանալ հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին:

Դատարանը պատասխանողին պատշաճ ձևով ուղարկում է հայցադիմու-մի և դրան կից փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև նախազուլաց-նում հայցադիմումին պատասխան ներկայացնելու ամհրաժեշտության մա-սին:

Այն դեպքում, երբ հայցադիմումը ներկայացնելու հետ միաժամանակ հայցվորը միջնորդություն է ներկայացնում հայցի կամ ապացույցների ապա-

հովման պահանջով, և դատարանը բավարարում է այդ միջնորդությունը, ապա հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճենները դատարանի որոշումը կատարելուց հետո անհապաղ ուղարկվում են պատասխանողին:

Այն դեպքում, երբ հայցադիմումին կից փաստաթղթերը ծավալուն են կամ դրանք դժվար է պատճենահանել, դատարանը գործին մասնակցող այլ անձանց ծանուցում է, որ նշված փաստաթղթերը, դրանց ծանոթանալու նպատակով, դեպոնացված են դատարանում: Ծանուցման մեջ նշվում են դրանց ծանոթանալու ժամկետները:

Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ստանալ հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները՝ օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելով:

Ինչպե՞ս է վարվում դատարանը, երբ հայտնի չէ պատասխանողի գտնվելու վայրը՝ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճենները ուղարկելու համար:

Պատասխանողի փաստացի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում դատարանը գործը քննում է պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարի կամ նրա վերջին հայտնի աշխատավայրի տնօրինության կողմից ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ստանալուց հետո:

Հայցվորի միջնորդությամբ դատարանը դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով հայտարարում է պատասխանողի և (կամ) նրա գույքի հետախուզում:

Պատասխանողի և (կամ) նրա գույքի հետախուզում հայտարարելու մասին դատարանը կայացնում է որոշում:

Ստանալով հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենները՝ պատասխանողը կարո՞ղ է, արդյոք, դրանց վերաբերյալ ներկայացնել առարկություններ:

Պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխան: Ելնելով գործի առանձնահատկություններից՝ դատարանը կարող է սահմանել պատասխան ուղարկելու ավելի երկար ժամկետ կամ պատասխանողի միջնորդությամբ երկարաձգել պատասխանը ներկայացնելու ժամկետը:

Հայցադիմումի պատասխանը պետք է պարունակի՝

- 1) դատարանի անվանումը, որտեղ ներկայացվել է հայցը.
- 2) հայցվորի անունը, ազգանունը (անվանումը).
- 3) հայցում ներկայացված յուրաքանչյուր պահանջն ընդունելու կամ դրա դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին պատասխանողի դիրքորոշումը:

Առարկելու դեպքում պատասխանում, մասնավորապես, պետք է անդրադարձ կատարվի հետևյալ հարցերին՝

- ա) հայցի հիմքում ընկած այն փաստերը, որոնք նա չի ընդունում.

բ) արդյոք հայցվորի ներկայացրած փաստերն էական նշանակություն ունեն գործի լուծման համար.

գ) այն փաստերը, որոնք ընկած են առարկությունների հիմքում, և այն ապացույցները, որոնք հաստատում են այդ փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված.

4) պատասխանին կցվող փաստաթղթերի և ներկայացվող ապացույցների ցանկը:

Պատասխանի հետ պատասխանողը ներկայացնում է նաև՝

1) իր տիրապետման ներքո գտնվող բոլոր հնարավոր գրավոր և իրեղեն ապացույցները, որոնք հաստատում են իր պնդած փաստերը, եթե նա կրում է դրանց ապացուցման պարտականությունը, և եթե այդ ապացույցները հնարավոր է կցել պատասխանին.

2) հայցադիմումի պատասխանը և կից փաստաթղթերը հայցվորին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելը հավաստող ապացույցները:

Պատասխանը ստորագրում է պատասխանողը կամ նրա ներկայացուցիչը:

Ներկայացուցչի ստորագրած պատասխանին կցվում է նրա՝ պատասխանը ստորագրելու լիազորությունը հավաստող փաստաթուղթը:

Պատասխան չներկայացնելը դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում:

Քաղաքացին իրավունք ունի՞, արդյոք, հակադարձ (հակընդդեմ) պահանջ ներկայացնել դատավարության ժամանակ, եթե այո, ապա ո՞ր դեպքերում:

Պատասխանողն իրավունք ունի մինչև գործով վճիռ կայացնելը հակընդդեմ հայց հարուցել ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար:

Հակընդդեմ հայցը հարուցվում է հայց հարուցելու ընդհանուր կանոններով:

Հակընդդեմ հայցն ընդունվում է, եթե՝

1) հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը.

2) հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը.

3) հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ և ճիշտ լուծումը:

ԳԼՈՒԽ 3 Հայցի ապահովում

Հայցի ապահովման ինչպիսի՞ միջոցներ կան:

Դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դա-

տական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը:

Հայցի ապահովման միջոցներն են՝

1) պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը.

2) պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը.

3) այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը.

4) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց հարուցելու դեպքում՝ գույքի իրացումը կասեցնելը.

5) պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը՝ անհապաղ կամ 5 օրը չգերազանցող ժամկետում:

Անհրաժեշտության դեպքում դատարանն իրավունք ունի կիրառել հայցի ապահովման մի քանի միջոց:

Դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ հայցի ապահովման դեպքում պատասխանողն իրավունք ունի հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշիվ մուծել հայցվորի պահանջած գումարը:

Գործին մասնակցող անձի միջնորդությամբ դատարանն իրավունք ունի հայցի ապահովման մեկ միջոցը փոխարինել մեկ այլ միջոցով կամ ձևափոխելու:

Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

Ե՞րբ և ինչպե՞ս է վերացվում հայցի ապահովումը:

Գործը քննող դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կարող է վերացնել հայցի ապահովումը:

Հայցի ապահովման վերացման հարցը լուծվում է միջնորդությունն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դատական նիստում: Գործին մասնակցող անձինք պատշաճ ձևով տեղեկացվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ հայցի ապահովման վերացման հարցի քննարկման համար:

Հայցի ապահովման վերացման հարցի քննարկման արդյունքներով կայացվում է որոշում:

Հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

Դատարանը, ձեռնարկելով հայցի ապահովման միջոցներ, կարող է պատասխանողի միջնորդությամբ հայցվորից պահանջել եռօրյա ժամկետում տրամադրելու ապահովում՝ պատասխանողի հնարավոր վնասների հատուցման համար:

Այդ պահանջը չկատարելու դեպքում հայցի ապահովման մասին որոշումը ենթակա է վերացման:

Պատասխանողն իրավունք ունի հայց հարուցել նույն դատարան ընդդեմ հայցվորի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով:

ԲԱԺԻՆ 6

Բացարկը և ինքնաբացարկը քաղաքացիական և քրեական դատավարություններում

Ի՞նչը կարող է հիմք հանդիսանալ դատավորի համար՝ ինքնաբացարկ հայտնելու:

Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլոց, այն դեպքերը, երբ՝

1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ.

2) դատավորը՝ որպես մասնավոր անձ, ակնհայտ է այն փաստերին, որոնք վիճարկվում են դատաքննության ընթացքում.

3) դատավորը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ:

Անձի հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները: Անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Անձի հետ արյունակցական կապի մինչև 3-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք.

4) դատավորը գիտի, որ նա անձամբ կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձինք տնտեսական շահ ունեն՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ:

Շահ անկախությունը չի ընդգրկում՝

1) բաց բաժնետիրական ընկերության բաժնետոմսեր անուղղակի ունենալը, եթե դա իրականացվում է ներդրումային կամ կենսաթոշակային հիմնադրամի կամ այլ անվանական սեփականատիրոջ միջոցով, և դատավորը չգիտի, որ հանդիսանում է տվյալ ընկերության բաժնետեր.

2) բանկում ավանդ ունենալը, ապահովագրական կազմակերպությունում ապահովագրական պոլիս ունենալը, վարկային կամ խնայողական միության ավանդատու կամ անդամ հանդիսանալը, եթե գործի էլքի արդյունքում այդ կազմակերպության վճարումնակությանն էական վտանգ չի սպառնա.

3) Հայաստանի Հանրապետության, համայնքի կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր ունենալը:

Դատավորը, որը ինքնաբացարկ է հայտնել, պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը, ինչը ենթակա է բառացի արձանագր-

ման: Ինքնաբացարկ հայտնած դատավորը, եթե համարում է, որ ինքը կարող է տվյալ գործով լինել անկողմնակալ, կարող է դիմել կողմերին՝ առաջարկելով իր բացակայությամբ քննարկելու ինքնաբացարկի անտեսման հարցը: Եթե կողմերը դատավորի բացակայությամբ որոշում են կայացնում դատավորի ինքնաբացարկը անտեսելու մասին, ապա այդ որոշումն արձանագրելուց հետո դատավորն իրականացնում է գործի դատաքննությունը:

Ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել:

ԳԼՈՒԽ 1

Ինքնաբացարկը քաղաքացիական դատավարությունում

Ինչպե՞ս է դատավորն ինքնաբացարկ հայտնում:

Դատավորն ինքնաբացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ:

Գործին մասնակցող անձը նման միջնորդություն կարող է ներկայացնել, իսկ դատավորն ինքնաբացարկ կարող է հայտնել միայն մինչև դատաքննությունն սկսվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը կապացուցի, իսկ դատավորը կհիմնավորի, որ ինքնաբացարկի հիմքն իրեն հայտնի է դարձել դատաքննությունն սկսվելուց հետո և մինչ այդ չէր կարող հայտնի լինել: Ամեն դեպքում միջնորդությունը կարող է ներկայացվել, կամ ինքնաբացարկը կարող է հայտնվել միայն մինչև դատաքննության ավարտը:

Ինքնաբացարկը պետք է լինի պատճառաբանված:

Դատավորի ինքնաբացարկի մասին միջնորդությունը ներկայացվում է գրավոր, որում շարադրվում են դրա հիմքերը:

Նույն հիմքով դատավորի ինքնաբացարկի մասին միջնորդություն կրկին ներկայացնել չի թույլատրվում:

Ինքնաբացարկի միջնորդությունն ի՞նչ կարգով է լուծվում:

Ինքնաբացարկի միջնորդություն հայտնելու դեպքում գործի քննությունն ընդհատվում է մինչև այդ հարցի լուծումը: Նիստը կարող է ընդհատվել ոչ ավելի, քան երեք օրով:

Նույն հիմքով հայտնված ինքնաբացարկի միջնորդությունը չի քննարկվում:

Չայտնված ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքներով դատավորը կամ ինքնաբացարկ է հայտնում, կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին:

Ինչպիսի՞ հետևանքներ են առաջանում ինքնաբացարկից հետո:

Դատավորի ինքնաբացարկի դեպքում դատական նիստը հայտարարվում է փակված:

Դատավորի ինքնաբացարկի դեպքում դատավորը փոխարինվում է նույն դատարանի մեկ այլ դատավորով:

Ինքնաբացարկի արդյունքում փոխարինված դատավորը կամ նորացված դատական կազմը գործի քննությունն իրականացնում է սկզբից:

ԳԼՈՒԽ 2

Բացարկը և ինքնաբացարկը քրեական դատավարությունում

Ի՞նչ է հասկացվում «բացարկ, ինքնաբացարկ, գործով վարույթից հեռացնելու միջնորդություն» ասելով:

Բացարկները, ինքնաբացարկները և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունները հայտարարվում են քրեական դատավարությանը համապատասխան անձանց մասնակցությունը բացառող հանգամանքների հիման վրա:

Դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը, պաշտպանը, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը, ընթերական, դատական նիստի քարտուղարը, թարգմանիչը, մասնագետը, փորձագետը, որոնց հայտնի են քրեական դատավարությանն իրենց մասնակցությունը բացառող հանգամանքներ, պարտավոր են դրանց մասին հայտնել դատավարության շահագրգռված մասնակիցներին, քրեական վարույթն իրականացնող մարմնին, իսկ այն դեպքում, երբ նրանք կասկածում են իրենց մասնակցությամբ գործի նորմալ քննության հնարավորությանը՝ հայտարարել ինքնաբացարկ կամ գործով վարույթից իրենց հեռացնելու մասին միջնորդություն:

Դատավարության մասնակիցն իրավունք ունի դատախազին, քննիչին, հետաքննության մարմնի աշխատակցին քրեական գործով վարույթի ցանկացած պահին բացարկ հայտնելու: Դատավորին ինքնաբացարկի միջնորդություն կարող է ներկայացվել միայն մինչև դատաքննությունն սկսվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ միջնորդություն ներկայացնողը կապացուցի, որ ինքնաբացարկի հիմքն իրեն հայտնի է դարձել դատաքննությունն սկսվելուց հետո և մինչ այդ չէր կարող հայտնի լինել:

Քրեական վարույթն իրականացնող մարմնին իրավունք ունի իր իրավասության սահմաններում լուծել հայտնված բացարկների, ինքնաբացարկների և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունների հարցը կամ քրեական դատավարությանը համապատասխան անձի մասնակցությունը բացառող հանգամանքներ հայտնաբերելու դեպքում՝ սեփական նախաձեռնությամբ հեռացնել նրան քրեական գործով վարույթին մասնակցելուց: Այլ անձանց հայտնված բացարկները լուծելու համար իրավասու անձին հայտնված բացարկը պետք է լուծվի առաջնահերթության կարգով:

Այն դեպքում, երբ գործով վարույթին, մի քանի անձանց միաժամանակյա մասնակցությունը բացառվում է, ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների պատճառով, քրեական գործով վարույթից պետք է հեռացվեն այն անձինք, որոնք մյուսներից ուշ են ձեռք բերել դատավորի կամ դատավարության մասնակցի իրավավիճակ: Եթե ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերություններով կապված ան-

ծինք հայտնվել են դատարանի կազմում, քրեական գործով վարույթից հեռացվելու ենթակա անձին ընտրում է նախագահողը:

Դատավորը ե՞րբ է պարտավոր ինքնաբացարկ հայտնել:

Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը, ի թիվս այլոց, ներառում են այն դեպքերը, երբ՝

1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ.

2) դատավորը՝ որպես մասնավոր անձ, ականատես է այն փաստերին, որոնք վիճարկվում են դատաքննության ընթացքում.

3) դատավորը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ:

Անձի հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները: Անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Անձի հետ արյունակցական կապի մինչև 3-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք.

4) դատավորը գիտի, որ նա անձամբ կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձինք տնտեսական շահ ունեն՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ:

Դատավորի կողմից գործը դատական քննության նախապատրաստելն առաջին ատյանի դատարանի կազմում համապատասխան գործի հետագա քննությանը նրա մասնակցությունը բացառող հանգամանք չէ: Վճռաբեկ դատարանի դատավորի մասնակցությունը գործի քննությանը, վճռաբեկ դատարանում նույն գործի քննությանը նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չեն:

Ինչպե՞ս է լուծվում դատավորին ինքնաբացարկ հայտնելու միջնորդության հարցը:

Դատավորին ինքնաբացարկ հայտնելու միջնորդության հարցը լուծում է այն դատավորը, որին ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն է ներկայացվել:

Դատավորների կոլեգիալ կազմով գործը քննելու ժամանակ, եթե ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացվել մեկից ավելի դատավորների կամ դատարանի ամբողջ կազմին, ապա յուրաքանչյուր դատավոր լուծում է իր ինքնաբացարկի հարցը:

Ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքում կայացվում է որոշում, որում նշվում են այն բավարարելու կամ մերժելու հիմքերը:

Դատավորը, որը ինքնաբացարկ է հայտնել, պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը, ինչը ենթակա է բառացի արձանագրման: Ինքնաբացարկ հայտնած դատավորը, եթե համարում է, որ ինքը կարող է տվյալ գործով լինել անկողմնակալ, կարող է դիմել կողմերին՝ առաջարկելով իր բացակայությամբ քննարկելու ինքնաբացարկի անտեսման հարցը: Եթե կողմերը դատավորի բացակայությամբ որոշում են կայացնում դատավորի ինքնաբացարկն անտեսելու մասին, ապա այդ որոշումն արձանագրելուց հետո դատավորն իրականացնում է գործի դատաքննությունը:

Ինքնաբացարկի մասին որոշումն անհապաղ ուղարկվում է դատավարության կողմերին:

Դատավորը պարտավոր չէ կայացնել ինքնաբացարկն ընդունելու մասին որոշում, եթե դատական ակտ կայացնելու համար չի կարող ստեղծվել արդարադատության մեկ այլ մարմին, կամ գործի լուծման հրատապության առումով անգործությունը կարող է հանգեցնել ծանր հետևանքների:

Դատախազը ո՞ր դեպքերում չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին:

Դատախազը չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե՝

1) առկա է քրեական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներից (*դատավորի ինքնաբացարկի համար վերը նշված հանգամանքներից*) որևէ մեկը.

2) համապատասխան քրեական գործը կամ նյութը քննող դատավորի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ:

Դատախազի մասնակցությունը քրեական գործի քննությանը, ինչպես նաև դատական նիստում նրա կողմից մեղադրանքը պաշտպանելը համապատասխան քրեական գործով վարույթին որպես դատախազ նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ:

Ինչպե՞ս է լուծվում դատախազին հայտնված բացարկը:

Դատախազին հայտնված բացարկը լուծում է վերադաս դատախազը, իսկ դատական նիստին մասնակցելիս՝ համապատասխան դատարանը:

Կարելի՞ է, արդյոք, բացարկել դատական նիստի քարտուղարին:

Դատական նիստի քարտուղարը չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե՝

1) առկա է քրեական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներից (*դատավորի ինքնաբացարկի համար վերը նշված հանգամանքներից*) որևէ մեկը.

2) օրենքով կամ դատարանի դատավճռով իրավունք չունի լինելու դատական նիստի քարտուղար.

3) դատավորի հետ գտնվում է ազգակցական հարաբերությունների մեջ.

4) հայտնաբերվում է նրա անձեռնհասությունը:

Որպես դատական նիստի քարտուղար՝ անձի նախորդ մասնակցությունը դատական քննությանը դատական նիստերին որպես այդպիսին նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ:

Դատական նիստի քարտուղարին հայտնված բացարկը լուծում է դատարանը:

Ո՞ր դեպքերում պաշտպանը կամ ներկայացուցիչը կարող են հեռացվել քրեական գործով վարույթից:

Պաշտպանը կամ տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե՝

1) գտնվում է ազգակցական կամ անձնական, ծառայողական կախվածության այլ հարաբերությունների մեջ այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցում կամ մասնակցել է քրեական գործի քննությանը.

2) գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատակից, մասնագետ, փորձագետ կամ վկա.

3) օրենքով կամ դատարանի դատավճռով իրավունք չունի լինելու փաստաբան կամ ներկայացուցիչ:

2. Պաշտպանը, ինչպես նաև տուժողի, քաղաքացիական հայցվորի և քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը չի կարող պաշտպանյալի կամ վստահորդի կողմից մասնակցել քրեական գործով վարույթին, եթե նա տվյալ գործով իրավաբանական օգնություն է ցույց տալիս կամ ցույց տվել այն անձին, որի շահերը հակասում են պաշտպանյալի կամ վստահորդի շահերին, ինչպես նաև այդ անձի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ: Ընդ որում, նշված հիմքերով պաշտպանին հեռացնելը թույլատրվում է միայն պաշտպանյալի համաձայնությամբ:

Պաշտպանին և ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելու հարցը լուծում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

ԲԱԺԻՆ 7

Դատավարական ժամկետները քաղաքացիական և քրեական դատավարություններում

ԳԼՈՒԽ 1

Դատավարական ժամկետները քաղաքացիական դատավարությունում

Ինչպե՞ս են հաշվարկվում դատավարական ժամկետները:

Դատավարական գործողություններ կատարելու համար ժամկետները որոշվում են օրացուցային ստույգ տարով, ամսով, ամսաթվով կամ որոշակի ժամանակահատվածով, որի ընթացքում գործողությունը կարող է կատարվել:

Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվվող դատավարական ժամկետի ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա սկիզբը:

Ե՞րբ են ավարտվում դատավարական ժամկետները:

Տարիներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին: Ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Եթե ամիսներով հաշվվող ժամկետի վերջը համընկնում է այնպիսի ամսվա, որը համապատասխան ամսաթիվ չունի, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

Այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Դատավարական գործողությունը կարող է կատարվել մինչև սահմանված ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

Կարո՞ղ են, արդյոք, կասեցվել դատավարական ժամկետները:

Չլրացած բոլոր դատավարական ժամկետների ընթացքը կասեցվում է գործի վարույթի կասեցմամբ: Դատավարական ժամկետների ընթացքը շարունակվում է գործի վարույթը վերսկսելու օրվանից:

Կարելի՞ է, արդյոք, վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետները:

Դատավարական ժամկետը բաց թողնելու դեպքում անձն այն վերականգնելու խնդրանքով պետք է դիմի համապատասխան դատարան: Դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու դեպքում վերականգնում է բաց թողնված ժամկետը:

Բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ վերականգնելը մերժելու մասին դատարանը կայացնում է որոշում:

ԳԼՈՒԽ 2

Ղատավարական ժամկետները քրեական դատավարությունում

Ինչպե՞ս են հաշվարկվում դատավարական ժամկետները քրեական դատավարությունում:

Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվվում են ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով:

Ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը:

Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում է վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին:

Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը չունի համապատասխան թիվ, ժամկետը վերջանում է այդ ամսվա վերջին օրը: Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Ձերբակալման տակ պահելու ժամկետն սկսվում է արգելանքի վերցնելու պահից:

Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, իսկ կալանքի տակ գտնվող կամ բժշկական հաստատությունում տեղավորված անձանց համար, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնված է մինչև ժամկետը լրանալը: Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով, իսկ կալանքի տակ պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնելու ժամանակը՝ այդ հաստատությունների գրասենյակների կամ պաշտոնատար անձանց կատարած նշումով:

Պաշտոնատար անձանց կողմից սահմանված ժամկետը պահպանելը հաստատվում է դատավարական փաստաթղթերում՝ համապատասխան նշումով:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի ստացման փաստը հաստատվում է գործին կցված նրանց ստորագրությամբ:

Կարելի՞ է, արդյոք, վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետները:

Ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում:

Բաց թողնված ժամկետի վերականգնման համար շահագրգիռ անձը միջնորդությամբ կամ խնդրանքով դիմում է վարույթն իրականացնող մարմնին: Այն որոշման կատարումը, որը բողոքարկված է սահմանված ժամկետի բացթողումով, նշված անձի միջնորդությամբ կարող է կասեցվել մինչև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը:

Հարգելի պատճառով բաց թողնված ժամկետը պետք է վերականգնվի վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ շահագրգիռ անձի միջնորդությամբ: Ընդ որում, ժամկետը վերականգնվում է այն բաց թողած անձի համար, այլ ոչ ուրիշ անձանց, եթե վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Բաց թողնված ժամկետը վերականգնելուց քրեական հետապնդման մարմնի հրաժարումը կարող է բողոքարկվել դատախազին: Բաց թողնված ժամկետը վերականգնելուց դատարանի հրաժարումը վերադաս դատարան բողոքարկման ենթակա չէ, սակայն վերադաս դատարանն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը՝ իր վարույթում գտնվող գործով:

ԳԼՈՒԽ 3 Հայցային վաղեմություն

Դատարան դիմելու համար որոշակի ժամանակային սահմանափակումներ կա՞ն, թե ոչ:

Օրենքը նախատեսում է դատարան դիմելու համար որոշակի ժամկետներ՝ հայցային վաղեմության ժամկետներ:

Հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

Պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

Եթե անձի իրավունքի խախտումը նրա համար առաջացրել է վնաս, և խախտումը կապված է սույն օրենսգրքով սահմանված կարգով գործարքների կնքման կամ դրանց կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության հետ, ապա վնասի հատուցման պահանջներով հայցային վաղեմության ժամկետը սահմանափակվում է 10 տարով՝ այն գործողության կատարման օրվանից հաշված, որն առաջացրել է վնաս:

Կարո՞ղ են, արդյոք, հայցային վաղեմության ժամկետները կողմերի համաձայնությամբ փոփոխվել, կասեցվել և ընդհատվել:

Հայցային վաղեմության ժամկետները և դրանց հաշվարկման կարգը սահմանվում են օրենքով և չեն կարող փոփոխվել կողմերի համաձայնությամբ:

Հայցային վաղեմության ժամկետները կասեցնելու ու ընդհատելու հիմքերը սահմանվում են քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:

Իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:

Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը:

Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Ինչպե՞ս են հաշվարկվում հայցային վաղեմության ժամկետները:

Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:

Այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

Այն պարտավորությունների համար, որոնց կատարման ժամկետը որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ առաջանում է պարտավորության կատարում պահանջելու իրավունք, իսկ եթե պարտապանին արտոնյալ ժամկետ է տրամադրվել պահանջը կատարելու համար, հայցային վաղեմության հաշվարկն սկսվում է այդ ժամկետի ավարտից հետո:

Յետադարձ պարտավորությունների համար հայցային վաղեմության ընթացքն սկսվում է հիմնական պարտավորությունը կատարելու պահից:

Պարտավորության մեջ անձանց փոփոխվելը չի հանգեցնում հայցային վաղեմության ժամկետի և դրա հաշվարկման կարգի փոփոխման:

Ե՞րբ կարող է կասեցվել կամ ընդհատվել հայցային վաղեմության ժամկետի ընթացքը:

Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե՝

1) հայցի ներկայացմանն արգելք է հանդիսացել արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանք (անհաղթահարելի ուժ)։

2) հայցվորը կամ պատասխանողը գտնվում է ռազմական դրության փոխադրված զինված ուժերի կազմում։

3) օրենքի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանվել է պարտավորությունների կատարման հետաձգում (մորատորիում)։

4) անգործունակ անձն օրինական ներկայացուցիչ չունի։

5) կասեցվել է համապատասխան հարաբերությունը կարգավորող օրենքի կամ այլ իրավական ակտի գործողությունը։

6) ներկայացվել է վճարման կարգադրությունը՝ այն դատարան հանձնելու պահից մինչև առարկություն ներկայացնելու պահը:

Քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հայցերով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է նաև կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու մասին համապատասխան մարմնին քաղաքացու դիմելու կապակցությամբ՝ մինչև կենսաթոշակ կամ նպաստ նշանակելը կամ դրա նշանակումը մերժելը:

Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է միայն այն դեպքում, երբ նշված հանգամանքները ծագել են կամ շարունակել են գոյություն ունենալ վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

Վաղեմության ժամկետի կասեցման համար հիմք ծառայած հանգամանքը դադարելու օրվանից շարունակվում է ժամկետի ընթացքը: Ժամկետի մնացած մասը երկարաձգվում է մինչև վեց ամիս, իսկ եթե հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ մինչև վաղեմության ժամկետը:

Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով:

Ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքը նորից է սկսվում:

Մինչև ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ:

Ինչպե՞ս է կարգավորվում հայցային վաղեմության ժամկետների ընթացքը դատարանի կողմից հայցն առանց քննության թողնելու դեպքում:

Եթե դատարանն առանց քննության է թողել հայցը, ապա մինչև հայցի հարուցումն սկսված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է ընդհանուր կարգով:

Եթե դատարանն առանց քննության է թողել քրեական գործով ներկայացված հայցը, ապա մինչև հայցի հարուցումն սկսված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև այն դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, որով հայցը թողնվել է առանց քննության: Ժամանակը, որի ընթացքում վաղեմությունը կասեցվել էր, չի հաշվվում հայցային վաղեմության ժամկետի մեջ: Ընդ որում, եթե ժամկետի մնացած մասը վեց ամսից պակաս է, այն երկարաձգվում է մինչև վեց ամիս:

Դատարանն իրավունք ունի՞, արդյոք, վերականգնել հայցային վաղեմության ժամկետները, թե ոչ:

Բացառիկ դեպքերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հաշվառմամբ հարգելի է ճանաչում հայցային վաղեմության ժամկետի բացթողումը, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության:

Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

Պարտապանը կամ այլ պարտավոր անձը, ով պարտականությունը կատարել է հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո, իրավունք չունի կատարածը հետ պահանջել, թեկուզև կատարելու պահին նա չի իմացել վաղեմության ժամկետը լրանալու մասին:

Կա՞ն արդյոք պահանջներ, որոնց վրա հայցային վաղեմությունը չի տարածվում:

Հայցային վաղեմությունը չի տարածվում՝

1) անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական բարիքների պաշտպանությանն ուղղված պահանջների վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

2) ավանդները վերադարձնելու վերաբերյալ ավանդատուների կողմից բանկին ներկայացվող պահանջների վրա.

3) քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու պահանջների վրա: Սակայն նման վնասի հատուցման իրավունքի ծագման պահից երեք տարի անցնելուց հետո ներկայացված պահանջներն անցյալ ժամանակի համար բավարարվում են ոչ ավելի, քան հայցի ներկայացմանը նախորդած երեք տարիների համար.

4) սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուզև այդ խախտումները կապված չեն եղել տիրապետումից զրկելու հետ.

5) սեփականատիրոջ՝ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց ակտը, որով խախտվել են սեփականատիրոջ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքները, անվավեր ճանաչելու մասին պահանջների վրա.

6) օրենքով սահմանված այլ պահանջների վրա:

ԳԼՈՒԽ 4

Դատական ժանուցումներ

Ինչպե՞ս է գործին մասնակցող անձը տեղեկացվում դատական նիստի կամ առանձին դատավարական գործողությունների կատարման ժամանակի, վայրի ու տեղի մասին:

Գործին մասնակցող անձինք դատական ժանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին: Դատական ժանուցագրերով դատարան են կանչվում նաև վկաները, փորձագետները և թարգմանիչները:

Ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով:

Ծանուցագիրն ուղարկվում է գործին մասնակցող անձի նշած հասցեով:

Ի՞նչ բովանդակություն պետք է ունենա քաղաքացուն ուղարկվող ծանուցագիրը:

Ծանուցագիրը պետք է պարունակի՝

- 1) դատարանի անվանումը և ստույգ հասցեն.
- 2) նշում՝ ներկայանալու ժամանակի և վայրի մասին.
- 3) գործը, որի վերաբերյալ անձը ծանուցվում է.
- 4) նշում՝ դատարան կանչվող կամ ծանուցվող անձի մասին.
- 5) նշում, թե անձը որպես ինչ է ծանուցվում կամ կանչվում.
- 6) նշում՝ չներկայանալու հետևանքների մասին:

Ինչպե՞ս է ժանուցագիրը հանձնվում գործին մասնակցող անձին, եթե վերջինս փոխել է բնակության վայրը:

Գործին մասնակցող անձինք պարտավոր են դատարանին և գործին մասնակցող այլ անձանց հայտնել գործի վարույթի ժամանակ իրենց հասցեն փոխելու մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում դատավարական փաստաթղթերն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված, թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի բնակվում կամ չի գտնվում:

ԲԱԺԻՆ 8

Պաշտպանը քրեական դատավարությունում

Ո՞վ է պաշտպանը քրեական դատավարությունում:

Պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Ե՞րբ է անձը պաշտպանի իրավավիճակ ձեռք բերում:

Անձը պաշտպանի իրավավիճակ ձեռք է բերում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ՝ նրա պաշտպանությունն ստանձնելու պահից: Պաշտպանը պարտավոր է պաշտպանությունն ստանձնելուց հետո այդ մասին անմիջապես տեղյակ պահել քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Ե՞րբ է պաշտպանը դադարում որպես այդպիսին մասնակցել քրեական գործով վարույթին:

Պաշտպանը դադարում է որպես այդպիսին մասնակցել քրեական գործով վարույթին, եթե՝

- 1) կասկածյալը կամ մեղադրյալը լուծել են նրա հետ ունեցած համաձայնությունը.
- 2) նա լիազորված չէ մասնակցելու համապատասխան գործով հետագա վարույթին.
- 3) քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանին ազատել է քրեական գործով վարույթին մասնակցելուց՝ հաշվի առնելով քրեական դատավարությանը նրա մասնակցությունը բացառող հանգամանքների հայտնաբերումը.
- 4) քրեական վարույթն իրականացնող մարմինը, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում, ընդունել է կասկածյալի կամ մեղադրյալի իրաժարումը պաշտպանից:

Ո՞ր դեպքերում է պարտադիր պաշտպանի մասնակցությունը քրեական գործով դատավարության ընթացքում:

Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝

- 1) այդպիսի ցանկություն հայտնել է կասկածյալը կամ մեղադրյալը.
- 2) կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով.

3) կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում.

4) կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին.

5) հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է.

6) մեղադրյալը ժամկետային ծառայության զինծառայող է.

7) կասկածյալների կամ մեղադրյալների շահերի միջև կան հակասություններ, և նրանցից մեկը պաշտպան ունի.

8) քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, ում վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում անմեղսունակության վիճակում.

9) կասկածյալը կամ մեղադրյալն անգործունակ է.

10) դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքում:

Պաշտպան ունենալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի արտահայտած ցանկությունը քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունը կանխորոշող հանգամանք չէ, եթե նրանք ունեցել են նշանակված պաշտպան, սակայն հայտարարել են պաշտպանից հրաժարվելու մասին, որն ընդունել է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Ինչպե՞ս է պաշտպանը մասնակից դառնում քրեական գործի քննությանը:

Փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝

1) կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգակացի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով.

2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա:

Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի որևէ մեկին երաշխավորել հրավիրելու որևէ պաշտպանի:

Քրեական վարույթն իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջում է փաստաբանին նշանակել պաշտպան՝

1) կասկածյալի կամ մեղադրյալի միջնորդությամբ.

2) այն դեպքում, երբ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ կասկածյալը կամ մեղադրյալը պաշտպան չունի:

Չեղածնության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանն իրավունք ունեն կասկածյալին կամ մեղադրյալին առաջարկել հրավիրելու այլ պաշտպան կամ պաշտպան նշանակել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջոցով, եթե՝

1) պաշտպանի իրավավիճակ ձեռք բերելու պահից 24 ժամվա ընթացքում պաշտպանը հնարավորություն չունի ներկայանալու կամ չի ներկայանում կասկածյալի կամ արգելանքի վերցված մեղադրյալի առաջին հարցաքննությանը:

2) պաշտպանը հնարավորություն չունի մասնակցելու քրեական գործով վարույթին 3 օրից ավելի ժամանակով:

Կասկածյալը և մեղադրյալը կարող են ունենալ մի քանի պաշտպաններ:

Դատավարական գործողությունը, որին պաշտպանի մասնակցությունն անհրաժեշտ է, չի կարող անօրինական ճանաչվել, եթե համապատասխան կասկածյալի կամ մեղադրյալի ոչ բոլոր պաշտպաններն են մասնակցել տվյալ գործողությանը:

Միևնույն քրեական գործով մեկից ավելի կասկածյալները կամ մեղադրյալները կարող են ունենալ մեկ պաշտպան, բացառությամբ պաշտպանյալների շահերի միջև հակասության առկայության, ինչպես նաև այն դեպքերի, երբ վտանգ կա, որ նրանց միջև պաշտպանի շփումները կարող են խոչընդոտել արդարադատության իրականացմանը:

Ինչպե՞ս է իր իրավավիճակը հաստատում պաշտպանը:

Իր իրավավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու համգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը:

Կարո՞ղ է կասկածյալը կամ մեղադրյալը հրաժարվել պաշտպանից և իր իրավունքներն ու շահերը պաշտպանել ինքնուրույն:

Պաշտպանից հրաժարվելը նշանակում է կասկածյալի կամ մեղադրյալի մտադրությունը՝ իր պաշտպանությունն իրականացնել առանց որևէ պաշտպանի իրավաբանական օգնության: Պաշտպանից հրաժարվելու մասին կասկածյալի կամ մեղադրյալի հայտարարությունն արտացոլվում է արձանագրության մեջ:

Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմնին ընդունում է միայն այդ դեպքում, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, ով կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ:

Քրեական վարույթն իրականացնող մարմնին իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները:

Պաշտպանից հրաժարվելու պահից կասկածյալը և մեղադրյալը համարվում են իրենց պաշտպանությունն ինքնուրույն իրականացնող, որը տվյալ

դեպքում իրավունքներից չի զրկում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից հետազայում նշանակված կամ քրեական գործով վարույթին մասնակցելուց չազատված պաշտպանին թույլատրել մասնակցելու վարույթին:

Պաշտպանից հրաժարված կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունի քրեական գործով վարույթի ցանկացած պահի փոխել իր դիրքորոշումն այդ առիթով:

Տվյալ դեպքում նոր պաշտպանի մասնակցությունը հիմք չէ գործի վարույթը վերսկսելու համար:

Պաշտպանն ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ ունի քրեական դատավարությունում:

Պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, նրա օրինական շահերը պաշտպանելու, կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար իրավունք ունի՝

1) ծանոթանալ առաջադրված մեղադրանքին կամ իմանալ՝ ինչու է կասկածվում պաշտպանյալը, մասնակցել նրա հարցաքննություններին:

2) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման:

3) քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողություններին, քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ մասնակցել քրեական հետապնդման մարմնի կողմից իր միջնորդությամբ իրականացվող բոլոր քննչական և այլ դատավարական գործողություններին, մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողությանը, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը:

4) կասկածյալին և մեղադրյալին հիշեցնել իրենց իրավունքները, և քննչական կամ այլ դատավարական գործողություն իրականացնող անձի ուշադրությունը իրավիթել նրա կողմից թույլ տրված օրենքի խախտման վրա:

5) քրեական գործով ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար:

6) հարցման ենթարկել մասնավոր անձանց, ինչպես նաև տարբեր կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր, եթե դրանք չեն պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք: Վերջիններս պարտավոր են սահմանված կարգով տրամադրել այդ փաստաթղթերը կամ դրանց պատճենները:

7) պաշտպանյալի համաձայնությամբ հարցնել մասնագետների կարծիքը՝ պարզաբանելու համար իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված այն հարցերը, որոնք պահանջում են հատուկ գիտելիքներ:

8) հայտնել բացարկներ:

9) հարուցել միջնորդություններ.

10) առարկել քրեական հետապնդման մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

11) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա կամ իր պաշտպանյալը մասնակցել կամ ներկա է գտնվել, դիտողություններ ներկայացնել այն քննչական կամ դատավարական գործողության արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, որին նա մասնակցել է, քննչական և այլ դատավարական գործողությանը, ինչպես նաև դատարանի նիստին մասնակցելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.

12) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն.

13) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերի և գործի նյութերի հետազոտմանը, հանդես գալ ճառով և ռեպլիկով.

14) իր խնդրանքով ստանալ այն որոշումների պատճենները, որոնք իր պաշտպանյալը ստանալու իրավունք ունի.

15) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը.

16) հետ վերցնել իր ներկայացրած ցանկացած բողոք, բացառությամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի.

17) տուժողի հետ կասկածյալի և մեղադրյալի հաշտվելիս պաշտպանյալի հանձնարարությամբ հանդես գալ նրա անունից.

18) առարկություններ ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն տեղեկացված կամ այլ հանգամանքների արդյունքում իրեն հայտնի դարձած դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ.

19) դատարանի նիստում կարծիք հայտնել դատավարության այլ մասնակիցների միջնորդությունների և առաջարկությունների առիթով.

20) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.

21) առարկել նախագահողի անօրինական գործողությունների դեմ.

22) պաշտպանյալի հաշվին, իսկ կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության բյուջեի հաշվին ստանալ վարձատրություն:

Պաշտպանն իրավունք չունի կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն: Պաշտպանը չի կարող հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ ընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը դրա կատարման մեջ:

Պաշտպանն իրավունք չունի իրապարակել այն տեղեկությունները, որոնք իրեն հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու ընթաց-

քում, եթե դրանք կարող են օգտագործվել պաշտպանյալի շահերի դեմ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Պաշտպանն իրավունք չունի ինքնակամ դադարեցնել իր լիազորությունները որպես այդպիսին, խոչընդոտել այլ պաշտպան իրավիդելուն կամ քրեական գործով վարույթին վերջինիս մասնակցելուն: Պաշտպանն իրավունք չունի քրեական գործով վարույթին մասնակցելու իր լիազորությունները վերավստահել այլ անձի:

Պաշտպանն իրավունք չունի առանց պաշտպանյալի հանձնարարության՝

1) հայտարարել հանցանքի կատարման մեջ նրա մեղավորություն մասին.

2) հայտարարել տուժողի հետ պաշտպանյալի հաշտվելու մասին.

3) ընդունել քաղաքացիական հայցը.

4) հետ վերցնել պաշտպանյալի ներկայացրած բողոքը:

Պաշտպանը պարտավոր է՝

1) կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն:

Ի՞նչ է իրենից ներկայացնում հանրային պաշտպանությունը Չայաստանի Հանրապետությունում:

Հանրային պաշտպանություն է համարվում օրենքով նախատեսված գործերով տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը:

Պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնությունը քրեական գործերով՝ Չայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև Չայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և հետևյալ դեպքերում.

1) ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով.

2) խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է փաստաբանների պալատը պետության հաշվին:

Անվճար իրավաբանական օգնություն կարող է ցույց տրվել նաև փաստաբանի նախաձեռնությամբ:

Ի՞նչ է իրենից ներկայացնում հանրային պաշտպանի գրասենյակը:

Հանրային պաշտպանությունն իրականացվում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով:

Հանրային պաշտպանի գրասենյակը փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմված է հանրային

պաշտպանի գրասենյակի ղեկավարից, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի երկու օգնականներից և հանրային պաշտպաններից:

Հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանների թվաքանակը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորման սահմաններում:

ԲԱԺԻՆ 9

Գույքային հարցերը և անձանց պաշտպանությունը քրեական դատավարությունում

ԳԼՈՒԽ 1

Քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում

Անձը կարող է, արդյոք, քաղաքացիական հայց հարուցել քրեական դատավարության ընթացքում:

Անձը կարող է քրեական դատավարությունում հարուցել քաղաքացիական հայց:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է քրեական դատավարության օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով:

Քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն քրեական դատավարության օրենսգրքով:

Քաղաքացիական հայցով որոշումն ընդունվում է քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի վրա չեն տարածվում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետները:

Քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցն ազատվում է պետական տուրքի գանձումից:

Քաղաքացիական հայցը քննվում է քրեական գործի հետ միասին՝ ըստ վերջինիս ընդդատության:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է դատավճռով:

Իրավունք ունի՞ անձը պահանջել վերականգնելու հանցագործության հետևանքով իրեն պատճառված վնասները (քաղաքացիական հայց հարուցել) քաղաքացիական դատավարության կարգով, եթե այն չի հարուցել քրեական դատավարության կարգով՝ հանցագործության վերաբերյալ գործի քննության ժամանակ:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց չհարուցելու դեպքում անձն իրավունք ունի քաղաքացիական հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով:

Քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով:

Նույն քաղաքացիական հայցով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը, հայցից քաղաքացիական հայցվորի հրաժարումն ընդունելու կամ հաշտության համաձայնությունը հաստատելու մասին դատարանի որոշումը, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը, որով հայցը մերժվել կամ լրիվ կամ մասնակի բավարարվել է, բացառում է քաղաքացիական հայցի հարուցումը:

Անձը ե՞րբ կարող է քրեական դատավարության ընթացքում հարուցել քաղաքացիական հայց:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահին՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ:

Քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:

Չայցադիմումում նշվում է, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես նաև պետք է բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին:

Չետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարտավոր են քաղաքացիական հայցվորի կամ նրա ներկայացուցչի կամ սեփական նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու քաղաքացիական հայցը:

Կարո՞ղ է, արդյոք, անձը հրաժարվել քաղաքացիական հայցից:

Քաղաքացիական հայց ներկայացրած անձն իրավունք ունի հրաժարվել հայցից քրեական գործով վարույթի ցանկացած պահին, եթե դրանով չեն խախտվում այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

Քաղաքացիական հայցից հրաժարվելն ընդունելը հանգեցնում է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցով վարույթի կարճման և համապատասխան անձին զրկում է տվյալ քաղաքացիական հայցը քրեական դատավարության կարգով կրկին հարուցելուց:

Արդյոք դատարանը կարո՞ղ է իր նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել գույքային վնասի հատուցման հարցը լուծելու համար:

Բացառիկ դեպքերում, երբ քաղաքացին զրկված է իր գույքային շահերն անձամբ պաշտպանելու հնարավորությունից, դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել հանցագործության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին:

ԳԼՈՒԽ 2

Աշխատանքի վարձատրությունը և ծախսերի հատուցումը քրեական դատավարությունում

Կարող եմ, արդյոք, հատուցվել քրեական դատավարությանը մասնակցած անձի կրած ծախսերը:

Պետական բյուջեի հաշվին ենթակա են հատուցման տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի, կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցչի, պաշտպանյալի համար անվճար իրավաբանական օգնություն ցույց տվող պաշտպանի, ընթերակայի, մասնագետի, թարգմանչի, փորձագետի, վկայի կրած հետևյալ ծախսերը՝

1) քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու երկաթուղային, ջրային, ավտոմոբիլային, բացառությամբ տաքսիից, և տրանսպորտի այլ տեսակներով երթևեկության արժեքը, իսկ քրեական վարույթն իրականացնող մարմնի համաձայնությամբ՝ նաև օդային տրանսպորտով երթևեկության արժեքը.

2) բնակտարածության վարձակալության արժեքը՝ ծառայողական գործուղումների վճարման համար ընդունված նորմերով, եթե այդ ծախսերն այլ կերպ չեն հատուցվել.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով մշտական բնակության վայրից դուրս տվյալ անձանց բնակվելու համար անհրաժեշտ օրապահիկը, եթե այն այլ կերպ չի հատուցվել.

4) միջին աշխատավարձն այն ամբողջ ժամանակի համար, որը նա ծախսել է քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով քրեական դատավարությանը մասնակցելու համար, բացի այն դեպքերից, երբ միջին աշխատավարձը նրա համար պահպանվում է հիմնարկում, ձեռնարկությունում, կազմակերպությունում, գործատուի կողմից.

5) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով քննչական կամ այլ դատավարական գործողությանը մասնակցելու հետևանքով աղտոտված, փչացած կամ կորած գույքի մաքրման, նորոգման, վերականգնման կամ ձեռքբերման ծախսերը:

Պետական մարմինները և հաստատությունները պարտավոր են տուժողի, կասկածյալի, մեղադրյալի, նրանց օրինական ներկայացուցիչների, ընթերակայի, թարգմանչի, մասնագետի, փորձագետի, վկայի համար պահպանել նրանց միջին աշխատավարձն ամբողջ ժամանակի համար, որը նրանք ծախսել են քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով քրեական դատավարությանը մասնակցելու համար:

Մասնագետին և փորձագետին հատուցվում է նաև նրանց պատկանող օգտագործված նյութերի արժեքը, որոնք նրանց կողմից ծախսվել են հանձնարարված աշխատանքը կատարելիս, ինչպես նաև աշխատանքի կատարման համար սարքավորումներն օգտագործելու, կոմունալ և այլ ծառայությունների համար նրանց մուծած վճարը:

Պաշտպանի վարձատրությունը:

Պաշտպանի կողմից կասկածյալին և մեղադրյալին ցույց տրվող իրավաբանական օգնությունը վարձատրվում է վստահորդի միջոցների հաշվին՝ պաշտպանի և վստահորդի միջև փոխհամաձայնեցված պայմաններով կամ պաշտպանի համաձայնությամբ ցույց է տրվում անվճար:

Նշանակված պաշտպանի կողմից կասկածյալին և մեղադրյալին ցույց տրվող իրավաբանական օգնությունը վարձատրվում է պետական բյուջեի հաշվին, եթե վստահորդը պաշտպանի հետ չի կնքել համաձայնություն և պաշտպանը չի հայտարարել անվճար օգնություն ցույց տալու մասին: Նշանակված պաշտպանին վճարվելիք գումարների չափը որոշվում է պաշտպանի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնին հաշիվ ներկայացնելուց հետո՝ մեկ ժամվա աշխատանքի համար՝ դատախազի մեկ ժամվա աշխատավարձի չափով: Դատարանն իրավունք ունի դատապարտյալի վրա դնել նրան ցույց տրված իրավաբանական օգնության վճարման համար պետության կրած ծախսերի հատուցումը, բացի այն դեպքերից, երբ կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնությունը պետք է ցույց տրվի անվճար:

Քրեական վարույթն իրականացնող մարմինը կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնության վճարից լրիվ կամ մասնակի ազատելու մասին կայացնում է պատճառաբանված որոշում:

Քրեական գործով վարույթին որպես նշանակված պաշտպան մասնակցող փաստաբանի իրավաբանական օգնությունը պաշտպանությունից հրաժարված կասկածյալին և մեղադրյալին ցույց է տրվում անվճար, եթե պաշտպանությունից նրանց հրաժարվելը չի ընդունվել վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Թարգմանչի, մասնագետի, փորձագետի վարձատրությունը:

Քրեական գործով վարույթում թարգմանիչը, մասնագետը, փորձագետը ստանում են՝

1) աշխատանքի վայրից աշխատավարձ, եթե աշխատանքը կատարել են ծառայության առաջադրանքի կարգով.

2) քրեական վարույթն իրականացնող մարմնի հետ պայմանավորված չափով վարձատրություն՝ պետական բյուջեի հաշվին, եթե աշխատանքը կատարել են քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով.

3) համապատասխան կողմի հետ պայմանավորված չափով վարձատրություն, եթե աշխատանքը կատարել են տվյալ կողմի հետ ունեցած պայմանավորվածությամբ:

ԳԼՈՒԽ 3

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը

Պաշտպանված են, արդյոք, քրեական դատավարությանը մասնակցող անձինք, թե ոչ:

Քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բա-

ցահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք: Մերձավոր է համարվում այն անձը, որի պաշտպանության նպատակով քրեական դատավարությանը մասնակցող անձը գրավոր դիմում է ներկայացրել քրեական վարույթն իրականացնող մարմին:

Քրեական դատավարությանը մասնակցող անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի (այսուհետ՝ պաշտպանվող անձ) պաշտպանությունն իրականացնում է քրեական վարույթն իրականացնող մարմինը: Քրեական վարույթն իրականացնող մարմինը հայտնաբերելով, որ պաշտպանվող անձը պաշտպանության կարիք ունի, այդ անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին, որը ենթակա է անհապաղ կատարման: Պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին պաշտպանվող անձի դիմումը քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քննարկվում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան դա ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Կայացված որոշման մասին անմիջապես հայտնվում է դիմողին, և նրան է ուղարկվում համապատասխան որոշման պատճենը:

Եթե պաշտպանվող անձի դիմումի վերաբերյալ քրեական վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել պաշտպանության միջոցներ ձեռնարկելու դիմումը մերժելու մասին, ապա դիմում ներկայացրած անձն իրավունք ունի որոշման պատճենն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, այն բողոքարկելու օրենքով սահմանված կարգով: Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու դիմումի մերժումը արգելք չէ պաշտպանվող անձի կողմից այդպիսի միջոցներ ձեռնարկելու մասին նոր դիմում ներկայացնելու համար, եթե նա ենթարկվել է սպառնալիքի կամ հարձակման կամ ի հայտ են եկել նախորդ դիմումում չնշված այլ հանգամանքներ:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության ինչպիսի՞ միջոցներ են նախատեսված:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության միջոցներն են՝

- 1) անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ունից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում:
- 2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը:
- 3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը:
- 4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը:
- 5) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը:

6) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն ներկայանալու անվտանգությունն ապահովելը.

7) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը.

8) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը.

9) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը.

10) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը.

11) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը.

12) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

Անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի պաշտպանության միջոցներ:

Պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով պաշտպանության ենթակա անձի պաշտպանությունը կարող է իրականացվել նաև օտարերկրյա պետության տարածքում:

Ինչպիսի՞ իրավունքներ ու պարտականություններ ունի պաշտպանվող անձը քրեական դատավարությունում:

Պաշտպանվող անձն իրավունք ունի՝

1) ներկայացնելու միջոցություն պաշտպանության լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու կամ դրանք դադարեցնելու մասին.

2) իմանալու իր նկատմամբ իրականացվող պաշտպանության միջոցի կամ միջոցների, դրանց տեսակի, իրականացման, ժամկետի և դադարեցման մասին.

3) դատական կարգով բողոքարկելու քրեական վարույթն իրականացնող մարմնի, նրա պաշտոնատար անձի որոշումները, գործողությունները կամ անգործությունը.

4) հրաժարվելու պաշտպանության միջոցներից:

Պաշտպանվող անձը պարտավոր է՝

1) կատարել քրեական վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջները.

2) քրեական վարույթն իրականացնող մարմնին անհապաղ տեղյակ պահել իրեն սպառնացող վտանգի կամ հակաիրավական գործողության յուրաքանչյուր դեպքի, իր անձնական կյանքում և գործունեության մեջ տեղի ունեցած և պաշտպանվող անձի պաշտպանությանն առնչվող ցանկացած փոփոխության մասին.

3) խուսափել որևէ գործունեությունից, որը կարող է խոչընդոտել պաշտպանության միջոցի արդյունավետ կիրառմանը.

4) պահպանել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ժամանակավոր օգտագործման համար իրեն հանձնված գույքը և փաստաթղթերը:

Քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին որոշում կայացնելուց հետո պարտավոր է պաշտպանվող անձին անհապաղ բացատրել նրա իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև աջակցել պաշտպանվող անձին այդ իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման գործում:

Ե՞րբ և ինչպե՞ս կարող են դադարեցվել քրեական դատավարությանը մասնակցող անձի պաշտպանության միջոցները:

Պաշտպանության միջոցների իրականացումը կարող է դադարեցվել, եթե պաշտպանվող անձը՝

1) այդ մասին ներկայացրել է գրավոր դիմում.

2) տվել է կեղծ ցուցմունք, որը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով.

3) չի կատարել օրենքով նախատեսված պարտականությունները.

4) այլևս պաշտպանության կարիք չունի՝ իր կյանքին կամ անվտանգությանը սպառնացող իրական վտանգի վերացման պատճառով.

5) մահացել է:

Պաշտպանության միջոցների իրականացման դադարեցումը կատարվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, որի պատճենը եռօրյա ժամկետում ուղարկվում է պաշտպանվող անձին, որը կարող է այն բողոքարկել դատական կարգով:

ՀՀ _____-ին
(նշել դատարանի անվանումը)

հայցվոր՝ _____
(անվանում / անուն, ազգանուն, հայրանուն)

_____ -ից
հասցե՝ _____
(նշել հասցեն)

_____ (անձնագիր/սոցիալական քարտի համարը՝ առկայության դեպքում)

_____ (իրավաբանական անձի դեպքում՝ ՀՎՀՀ, պետ. գրանցման համարը)

պատասխանող՝ _____
(անվանում / անուն, ազգանուն)

հասցե՝ _____
(նշել հասցեն)

ՀԱՅՅԱԴԻՍՈՒՄ պահանջի մասին

_____ (նշել հայցի համառոտ պահանջը)

_____ :

(տալ վեճի համառոտ նկարագրությունը)

Գտնում եմ,

որ _____

_____ (նշել հայցվորի պահանջները հիմնավորող ապացույցները, հանգամանքները (գումարի բռնագանձման պահանջի դեպքում՝ բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը և դրա հաշվարկը))

ՀՀ _____
(նշել դատարանի անվանումը)
դատավոր _____-ին
(անուն, ազգանուն)
հայցվոր՝ _____
_____ -ից
(անուն, ազգանուն/անվանում)
հասցե՝ _____
(նշել հասցեն)
հեռ.՝ _____

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ
հայցի ապահովման մասին

ՀՀ _____-ի վարույթում է
(նշել դատարանի անվանումը)
գտնվում քաղաքացիական գործն ըստ

հայցի _____ ընդդեմ
_____ -ի՝
(նշել հայցվորի անունը / անվանումը) (նշել պատասխանողի անունը / անվանումը)
_____ պահանջի (ների) մասին:
(նշել վեճի առարկան)

Գտնում եմ, որ հայցի ապահովման միջոցներ չձեռնարկելը կարող է

(նշել պատճառները , որոնք կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել դատական ակտի կատարումը)

պատճառով դժվարացնել կամ անհնարին դարձնել դատական ակտի կատարումը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածը՝ դատարանին

Խնդրում եմ

Ձեռնարկել հայցի ապահովման հատկյալ միջոցները՝

1. _____

2. _____

3. _____

(նշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածում թվարկված միջոցներից մեկը կամ մի քանիսը)

Կից ներկայացնում եմ`

1. _____

2. _____

/.../ _____

(նշել կցվող ապացույցները, եթե այդպիսիք կան)

Քայցվոր`

(ստորագրություն, անուն, ազգանուն)

«__» _____ 200_թ.

ՃԱՆՈՑԱԳՐՈՒԹՅՈՒՆ

սույն աշխատանքում կիրառված հասկացություններն են՝

1. **քրեական գործով վարույթ** – տվյալ քրեական գործի քննության ընթացքը
2. **քաղաքացիական գործով վարույթ** – տվյալ քաղաքացիական գործի քննության ընթացքը
3. **հայցվոր** - դատարան դիմած անձ
4. **պատասխանող** - անձ, ում դեմ դատարանում հայց է հարուցված
5. **քրեական վարույթն իրականացնող մարմին** – տվյալ քրեական գործը քննող անձը՝ քննիչ, դատավոր, դատախազ, հետաքննության մարմին
6. **կասկածյալ**- կասկածյալ է համարվում այն անձը՝
 - ով ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով,
 - ում նկատմամբ մինչև մեղադրանքն առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված,
7. **մեղադրյալ** - մեղադրյալ է համարվում այն անձը, ում նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին
8. **ամբաստանյալ** - այն մեղադրյալը, ում վերաբերյալ գործը նշանակված է քննության, կոչվում է ամբաստանյալ
9. **դատապարտյալ** - այն մեղադրյալը, ում նկատմամբ դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ
10. **արդարացված** - այն մեղադրյալը, ում նկատմամբ դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ և այդ դատավճիռն ամբողջությամբ արդարացման է:

ՎԱՐԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

VAHE YENGIBARYAN

COURT AND JUSTICE

FAMILY LAW MANUAL

Խմբագիր՝

Հրաչիկ ՍԱՐԳՍՅԱՆ

Լեզվադասակաճ
Խմբագիր՝

Ամալյա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տեխ. խմբագիր՝

Արարատ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Կազմի ծնավորող՝

Նարինե ԱԶԱՐՅԱՆ



«Անտարեն» հրատարակչատուն
Երևան–0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ +(374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am